

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

34 րդ ՏԱՐԻ

1885 ԴԵԿՏԵՄԲԵՐ 28

ԹԻԻ 3802

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 28 ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՆԱՅՈՂ ՏԱՐԻՆ

1885 տարւոյ վերջին շաբաթին հասանք եւ ՄԱՍԻՍ յառաջիկայ թիւն 1886 ին լոյս պիտի տեսնէ : Յետագայ ակնարկ մը ձգել, յիշել թէ ի՞նչ ըրինք այս տարի, խորհիլ թէ ազգային շրջանակի մէջ ի՞նչ կորուսինք եւ ի՞նչ չահեցանք, վերջապէս կշիռ մը հանել մեր գործերու եւ անգործութեանց, ինչպէս վաճառականն կշիռ մը կը հանէ իւր վիճակն հասկնալու համար՝ աւելորդ աշխատութիւն մը չէ :

Ոչ միայն աւելորդ չէ այդ աշխատութիւնն, այլ նաեւ դժուար ալ չէ . Մասին բազմաթիւ սիւնակներ հարկաւոր չեն 1885 ի ազգային գործոց յիշատակարան մը տալու համար : Պատրիարք մը ընտրեցինք, Կաթողիկոս մը ունեցանք : Ահա՛ չորս բառով գնացող տարւոյն մէջ կատարեալ գործերն :

Զարմանալի չէ սակայն թէ չորս բառով ըսուածն չորս բառով կատարուած չըլլայ : Որքա՛ն տքնեցանք, որքա՛ն յոգնեցանք, որքա՛ն վիճաբանեցանք մինչև որ Ամեն Յորութիւն Սրբազանն բազմեցուցինք իւր գահուն վրայ : Ընտրութիւնն չեղաւ այնքան դժուար որքան վաւերացումն եւ իրօք համայն Ազգին համար խնդութեան օր մը եղաւ այն օրն երբ Լոյտի Ժէֆֆէն չոգեհաւն բերաւ Պոլսոյ պարիսպներուն առջեւ հոգեւոյս Ներսէս Պատրիարքի յաջորդն :

Տակաւին Ներսէս Պատրիարք կ'ապրէր երբ այդ ընտրութեան խնդիրն բացուելու վրայ էր եւ վեց ամիս վերջ միայն ամենայն ինչ աւարտեցաւ : Վսեմ. Նուրեան էֆէտիի առեւտրականութեամբ վարչութիւն մը եկաւ յաջորդել Վսեմ. Սիմոն պէյ Մաքսուտեանի վարչութեան, որոյ պաշտօնավարութեան ժամանակն լրացած էր : Նուրեան էֆէտիի վարչութիւնն առաջին օրէն կենդանութեան նշաններ տուաւ, թէպէտ քիչ վերջը կաթողիկոսական խնդիրը եկաւ հըրապարակն յուզել եւ դառնեցնել վարչութիւն եւ ժողով : Սակայն այս ամենուն մէջ երուսաղիմայ պարտուց վճարման խնդիրն առաջ գնաց եւ կ'ընթանայ որոշեալ ճանբուն մէջ : Յուսանք թէ կ'աւարտի որոշեալ ժամանակին :

Երկրորդ կատարուած գործն, Կաթողիկոսական խնդիրն ըսել կ'ուզենք, ամեն խնդրէ աւելի յուզեց զվարչութիւն, զՆրբափոխանութիւն եւ զԼրագրութիւն : Բոլորն կիրքեր, ծանր խօսքեր եւ մինչև իսկ անպատշաճ վարմունք կորուսեալ դատերու փաստաբանաց, ժամավաճառ ընել տըռւին Ազգին գործիչներն : Բայց, փա՛ռք Տեառն, այժմ աւարտած է ամենայն ինչ, ամենայն Հայք ընդունած են Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութիւնն :

Ռուսահայոց վարժարանաց փակումն այս տարւոյ պատահարներուն եւ կամ լաւ եւս պատուհասներուն զխաւորն է : Երբ Կաթողիկոսի վրայ կը խօսուի անկարելի է չիշել մեր ռուսահայ երիտասարդութեան տըռլուր վիճակը : Վարժարան, վարժարան, կը գոչեն ամեն կողմէ եւ վարժարաններ կը փակուին ապագայ սերնդեան մը առջեւ : Եւ Մակար Կաթողիկոսի անունն մեր

մտաց մէջ կցուելով փակեալ վարժարանաց տխուր յիշատակին, չենք կարող աստ չյայտնել այն ջերմ փափագն կամ լաւ եւս արդար ակնկալութիւնն որ կ'սպասենք մեր Կաթողիկոսէն վարժարանաց բացմամբ: Այս սպասուհասն այժմեան Կաթողիկոսին թերութեամբ չէ, բայց այլ ի՞նչ պահանջներ կ'աթողիկոսէ մը եթէ ոչ ազգին համար ամենէն կենսական խնդրոյ մը լուծումն:

Եթէ այս գործոց կշռոյն հակառակ կողմն անցնինք, եթէ քննենք թէ գնացող տարւոյ մէջ կատարուած երկու դիմաւոր դործերու փոխարէն ո՞րքան գործեր անկատար կամ թերակատար մնացին, մեծ է այս շարքը: Այնքան մեծ է որ չենք համարձակիր ի տես դնել: Այդպիսի Պատրիարքարանի դրամական վիճակն ինչ որ էր նոյնը մնաց այս տարի եւս: Սրբեօք, նոյնը տիրտի մնա՞յ գալ տարի: Դրա՛մ, դրա՛մ, դրա՛մ, ահա՛ 19-րդ դարու գլխաւոր շարժիչն: Ազգային ժողովն, Ազգային վարչութիւնն, Ազգային անհատը, ամեն ոք, ինչպէս ամեն ազգեր պէտք է գիտնան թէ առանց դրամական բարւոք վիճակի չէ կարելի գործել: Եթէ քիչ է դրամին քիչով կը գործենք, եթէ առատ է աւելի մեծ գործեր կ'ընենք, բայց ամեն պարագայի մէջ, հարուստ թէ աղքատ, պէտք է որ վիճակինս բարեկարգ ըլլայ: Ստուգիւ գիտնանք թէ ինչ պիտի գանձենք, ըստ այնմ որոշենք թէ ինչ պիտի ծախսենք: Բարոյական յառաջդիմութիւնն նիւթականին անանջատ կերպիւ կ'ցեալ է:

Չկայ այնքան ցաւալի վիճակ որքան անհատն, ինչպէս ընկերութիւնն, հանրային վարչութիւնն կամ կրթական չէզոք ընկերութիւնն, որ կը տեսնէ թէ ինչ ծախսեր ունի, բայց չտեսնէր թէ ինչ հասոյթներ պիտի ունենայ: Յուսահատութիւն եւ ջլատութիւն կուգայ եւ դրամին հետ եռանդն կը պակսի:

Եւ Ազգային վարչութիւնն, ինչպէս ազգային շատ մը հաստատութիւնք, թէեւ բացառութեամբ, դրամականով եւ հետեւաբար բարոյականով, փայլուն ըլլալէ հետո՛ւ են 1885 տարւոյ մէջ:

Եթէ չկատարուած այլ գործերու շարքն սկսինք, եթէ ըսենք թէ այս տարւոյ մէջ կրթական օրէնքի, փանօրէից, սահմանադրութեան վերաքննութեան, ընծայարանի,

կեդրոնական վարժարանի եւ այլ գործեր յաջորդ տարւոյ ժառանգութեան կը թողնին, եթէ շարունակենք այսպէս, թերեւս յոյժ տխուր տպաւորութիւն թողու 1885 տարւոյ կ'ընեն:

Ուրեմն կը դադրինք խօսելէ եւ միայն կը մտիւթարուինք՝ կրկնելով թէ 1885 տարին Պատրիարք եւ Կաթողիկոս տուաւ Հայոց ազգին:

Մ Ի Մ Ո Ւ Մ

Հ Ա Մ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԵՒ

Լ Ե Ւ Ո Ն Մ Ե Մ Ա Գ Ո Ր Ծ

Հ Ա Ւ Ա Ք Ե Ա Ն

Ի Հ. ՂԱԽՈՆՏԵԱՅ Վ. Մ. ԱՆԻՇԱՆ

ՅՈՒԽՏԷՆ ՄԻԻԹԱՐԱՅ

Ընթերցողք անշուշտ իմացան Հ. Ղ. Անիշանի վերջին հրաշակերտին, «Սխռւան»-ի հրատարակութիւնն, հոյակապ գործ մը որ Կիլիկիոյ ընական, քաղաքական եւ պատմական մանրամասն նկարագրութիւնն է: Հատորն յոյժ ստուար է եւ կը պարունակէ բազմաթիւ ճարտարարուեստ պատկերներ: Գաղափար մը միայն տալու համար այդ հսկայական գործին վրայ, ծնունդ կէս դարու աշխատութեանց, այսօր կ'սկսինք հրատարակել գործին Յառաջաբանն:

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Որպիսի՞ իցէ բնութեամբ եւ տեսլեամբ վիճակեալն յաստուածուստ եւ ի մարդկանէ՝ մասն երկրագնդին, յորում ի միջի վիճակաց այլոց ազգաց, և յառաջ քան գյուղովս ի նոցունց, ծանեան եւ ծանուցան Հայք՝ սեփական տոհմ մի մարդկութեան, սիրեալ յանդորրու կամ յարմարի՝ ի դեռադոյն գետահովիտս գուգահետ գնացից Եփրատայ եւ Տիգրիսի, Երասխայ եւ Կըրի, Այրւսայ եւ Իռիսայ, եւ յետոյ ուրեմն Սարոսի եւ Պիւռամիսի, զորս եւ գիտացին եւ անուանեցին իւրեանց Հայրենիս, — որպի-

սի՞ տնտեսութեամբ քաղաքաւարելով առ-
տնին եւ ընդ օտարս, կեցին, կրեցին եւ
գործեցին այս քառասուն եւ աւելի դարը,
թերեւս հարիւր եւ յիսուն ծննդովք՝ յա-
ռաջնոյ անտի նահապետէն իւրեանց՝ սեր-
եալ յորդուոց յորդիս, մերթ ինքնիշխանա-
բար եւ մերթ ընդ օտարի միջամուխ ձե-
ռամբ, ըստ ուղղութեան ամենախնամ ա-
ջոյն, որ՝ ի վերուստ գլխոց անուանեալ
գլխոց երկրի՝ վարէ վնարդիութիւնս ընդ
հուն ժամանակի՝ յեզր յաւիտենից. — քա-
նիօն ի սեփական յայնմ հայրենական աշ-
խարհախուփ հրապարակի՝ դէպք կենցա-
ղականք եւ իրակարգութիւնք գործոց.
քանի՞ շահախնդրութիւնք. ո՞րքան յուզ-
մունք եւ բազմադիմակ յեղափոխութիւնք. —
որպիսի՞ ձեռակերտք յերեսս երկրին՝ ի պա-
հուստ կամ ի պարծանս կենաց. որպիսի՞
արձանք եւ արձանագրութիւնք՝ մրցողք մո-
ռացութեան, եւ անմահութեան կարծեց-
եալ ախոյեանք. — ո՞րքան արարող մնա-
ցողք, աւերակք եւ դերբուկք կուտակ-
եալք խառնեալք յերեսս եւ յընդերս երկ-
րի, զորս ծանակէ եւ ծածկէ արօր հողա-
գործին, (զգայուն եթէ անզգայ նախնեացն
նշխարաց). — որքանութիւն գերեզմանաց
համօրէն տոհմից եւ պայազատութեանց իս-
պառապուռ անձեռ եւ անհետ եղելոց՝ ընդ
անվերանալի կափարջաւ անցելոցն, որ հա-
մահաւասար հարթէ զամենայն հոսակ եւ
կերպարանս, զբարձրութիւնս եւ նուա-
սութիւնս, զվայելչութիւնս եւ տառապա-
նքս, զյողթող եւ զյողթեալ, զհարստա-
հարող եւ զհարստահարեալ. — որպիսի՞ք
եւ յազարակս անգ մահու՝ տակաւին կան-
գունք կամ կիսաքանդ տաճարք պաշտաման
Անմահին. ո՞րքան եւ ո՞րքան նուիր սկանք
հոգեւոր եւ մտաւոր հրահանգաց վայրք՝ ի
չէնս եւ յանչէնս. վանորայք միաբան միա-
խոհ ընկերաց, կամ մենանոցք եւ մատրուներ
ի մտապարս եւ ի կատարս լերանց մեկու-
սացեալք, իբրեւ յերկրէ յերկին վերելս
խնդրելով, եւ ընդ խնկոց զխանդս հոգւոց
հրախառն հառաչանօր սփռելով ի հեշտա-
լուր բարձունս. — քանի՞ սլացք եւ խոյանք
մտաց, ցնորք եւ զիւտք բանաստեղծից,
գրուածք խմաստասիրաց, աղերսք աղօթ-
կերաց, երգք գուսանաց, զեռմունք բըշխ-
մունք սրտի, եւ համասփիւռ բարբառք եւ

արձագանդք սիրոյ՝ նպատակեալք ի համա-
գոյս համակիրս, կամ հասեալք, հարեալք
եւ հալեալք, կամ իբրեւ յապառուս ապա-
ռածից մերժեալք եւ վրիպեալք. — քանի-
պատի՛կ հանգէսք հրճուականք եւ եղերա-
կանք. ո՞հ, ո՞րքան հեղեղք արեան խառ-
նեալ ընդ աղբերս կաթին, եւ արտասուք
ընդ քրտանց վիժեալ ի դէմս անարօրս եւ
արօրեալս. ո՞րքան ձգունք եւ մահունք նա-
հատակաց՝ ի վերայ հաւատոց եւ հայրեն-
եաց. — եւ համօրէն ասել, ո՞րպէս յան-
ընդհատ հոսանս անդ հայասեռ ազգու-
թեանս՝ մերթ ուռճացելոյ եւ մերթ նուա-
ճեցելոյ, ի հաշտ եւ յանհաշտ աղմուկի խռով-
եալ եւ խաղաղեալ դարուց եւ զիպաց, ի
չփոթութեան մտաց եւ հնարից, ի ձօձման
զինուց եւ խաչից, զխաղդ անշիւթ եւ ա-
նարգել ներգործէին կամք Աստուածու-
թեան՝ ի բազմաժամանակեայ եւ ի բազմա-
յեղանակ աշխարհիս Հայաստանեայց. . . :
Ջայսոսիկ եւ զայսպիսիս՝ ըղձանայի իբրեւ
ի քառասուն ամաց հեաէ, յորդորեալ ի
թեւադրութենէ հայրենասիրաց ումանց եւ
յիմոց ընդ արոյս ախորժակաց, հետազօտել
եւ ի գիր արձանագրուցանել, ընծայելով
երբեք երբեք փորձս ինչ կամ ճաշակս. որ-
պէս եւ յառաջ քան յամս չորս՝ զՏեղագրու-
թիւն դաւառի միոյ Այրարատ աշխարհի,
զՇիրակ. յորոյ եւ ի յառաջաբանին ծանուցի,
զի եթէ ոչ ըստ նմին օրինակի ընդարձակ՝
այլ եւ ոչ համառօտ՝ կամէի տեղագրել զմի
մի յաշխարհաց եւ գաւառաց Հայոց. Գործ՝
թերեւս յանդուգն եւ մանրամասն չափով,
որ եւ դամ քան զդամ ընդարձակէր ընդ
ըզձիցս եւ ընդ նորանոր ծանօթութեանց
ի վեր երեւելոց. սակայն եւ ոչ անհնար ի
գլխաւորել, եթէ բովանդակ երկարութիւն
այնքան ամաց ծախեալ էր ի նոյն, եւ ոչ
դադարեալ եւ լքեալ երբեմն վասն ի-
րիք իրիք պատճառաց՝ զոր ոչ է հարկ հո-
ւանել:

Յընթացս այնր պարագայի ստորագրեալ
էր իմ զմեծ մասն կամ զյոլովս աշխարհաց
Հայոց մեծաց, որք եթէ մի ըստ միովէ հը-
րատարակեալ էին՝ կարծեմ թէ եւ ոչ անըն-
դունակք լինէին բանասիրաց. իսկ այժմ՝
ըստ յոլովել ամաց եւ յաճախել եւ փոփոխել
զիպաց, ի յայտնել նորանոր աշխարհա-
գրական ծանօթութեանց, եւ մանաւանդ

յերեւել ստուգադոյն եւ մանրամասն տեղացոյց տախտակաց, յորոց զուրկ էի յառաջն յայնժամ, եւս եւ ՚ի գտանել արուեստի լուստոյի նմանահանութեան, ՚ի վերայ հասանեն բանադիտակք՝ զի ի դէպ է հընացեալս համարել զնախագրեալն առ յինէն՝ երեսուն եւ աւելի ամօք յառաջ, եւ հարկ՝ միւսանգամ վեր ՚ի վայր յեղյեղել եւ ուղղել, եւ ըստ այնոցիկ եւ ընդ այնոսիկ՝ շարադրել եւ բոլորել զմնացեալ մասունս երկրին Հայոց։ Իսկ առ այս՝ անպատրուակ դիմօք եւ կամօք խոստովանիմ զպարտութիւնս. այլ յաւելում եւ ըստ աւետարանական տնտեսին, զի եթէ զայդ « Գործել ոչ կարեմ, եւ մուրանալ ամաչեմ » այսինքն է, մինչ չափ եւ զօրութիւն տիրոց եւ յուշոյ՝ ոչ եւս ներեն մտադիւր դեգերել յայնպիսի գործ՝ թող թէ բովանդակել, տակաւին ոչ հանդուրժէ հնացեալն եւ ունակացեալ իղձ շատանալ հարեւանցի եւ համառօտ ստորագրութեամբ համօրէն հայկական անուանեալ աշխարհաց՝ իբրեւ քսանից, յորս՝ եթէ հնար էր՝ կամէի քայլ առ քայլ յածել եւ դժել։ Արդ՝ դաւարագոյն հասակի եւ ժրագոյն դրչի, նաեւ աշողագոյն ժամանակի թողեալ զերկնեալս յինէն խորհուրդ՝ լաւագոյն եւս կերպարանել եւ ծնանել, մինչ հարկ եւ օրէն է ինձ տեղի տալ յասպարիզէ, յորում թէ ոչ այլով իւրիք՝ գոնեա իմովս պսակեցայ ալեօք, փափագէի՝ զի ժամանակն միայն եւ գերագոյն կամք՝ լինէր ինձ յաղթող, եւ ոչ վատթարապէս նահանջաբեկէր, կամ ճրճէր եւ ցրէր ժանդահար ժանեօքն, բայց եթէ տապաւն դընելով ՚ի սեամս լուսակոխ տաճարի Աստուծոյ, առ որ միշտ ըղձացայ կառուցանել զակն ոգւոյս, մինչ դեռ մարմնաւորս թափառեալ թափանցեալ՝ մերթ ցոլայր ցնծութեամբ եւ մերթ ցնդէր կսկըծմամբ ՚ի պրակս եւ ՚ի պատկերս երկրաւոր հայրենեացն, եւ ՚ի յիշատակս՝ որք եւ յերկրի եւ յերկրին մնան անթառամ։ Քանի՜ գծուծ եւ գետնաքար է սիրտ՝ զոր ոչ արծարծիցէ կայծակն յուսոյ կենաց հանդերձելոց։

Սկիզբն տեղագրութեան Հայաստանեայց արարեալ էր իմ ՚ի հիւսիսային արեւմտեան մարզից, յեզերաց Պոնտոսի մսելով ՚ի ծործորս Ճորոխի, եւ անցանելով ՚ի գետահովիտ Վստուկայ կամ բնիկն Եփրատայ (Ֆրատ), ապա ՚ի Կուր դետոյն, անդուստ ոլորեալ զԿասպիական ծովափամբ՝ խոտորէի յօտարախառն Տիգրիս, ՚ի հունեւանել ՚ի բնահովիտս՝ Հայոց յերասխայն եւ յԱրածանոյ, եւ դառնալ ՚ի Փոքր Հայս եւ աւարտել ՚ի Կիլիկիա. իսկ այժմ՝ աւադիկ հակառակ չըմամբ՝ ուր զկատարածն առնել կամէի՝ անդ առնեմ սկիզբն՝ եւ աւարտ. (անստոյգ ժամանակի թողեալ՝ եթէ աջողիցէ թափել մասն ինչ ՚ի միջոյն, եւ երբ զհարդ եւ է հանել ՚ի լոյս)։ Բայց պատճառ գլխաւոր՝ ՚ի յոգունց աշխարհաց նախընտիր առնելոյ զՍԻՍՈՒԱՆ, որպէս հաւանեցայ կոչել Կիլիկիա եւ ծանուցի զպատճառան (յէջ 59), այս է, զի ՚ի վաղուց հաւաքեալ էր իմ գիտելիս՝ յաւէտ պատմականս՝ զայս աշխարհի, եւ նշանակեալ համառօտիւք, զորս ոչ էր դիւրին լուծանել եւ վերծանել յետամնացիցն իմոց. իսկ վերստին հաւաքել նոցա, թէպէտ գուցէ լիադոյն եւս, այլ կրկին եւ երկար լինէր վաստակ. վասն որոյ բուռն հարկ թափել ՚ի կորստենէ զայնքան թռուցեալ եւ հեռացեալ ամաց եւ ժամուց գիծս եւ նիւս, եւ ամիոյնել (թէ եւ ոչ զբովանդակն) յայտ մատենի։ Ընդ սմին եւ մերձաւորութիւն ժամանակի քաղաքական անցից ազգայնոցս յայտ նահանգի, համարիմ՝ թէ հետաքննելի զսա ընծայեացն քան զբնաւս, թէպէտ եւ ըստ այլ տեսութեանց՝ առաւելուցուն հրապոյրք աշխարհաց Մեծաց Հայոց. բայց չիք եւ ոչ մի իբրեւ զՍիսուան՝ որ կարիցէ կցորդել զսերկեան ազգիս ընդ երկկեանն ժամանակի, յորում տակաւին անձնիշխանութեամբ քաղաքավարէր ի միջի եւ ընդ այլոց ազգաց. միանգամայն եւ երկար տեւողութիւն տէրութեան համազգեացս աստ՝ ՚ի միջի չհամազգեացն կալով, այլ եւ՝ որպէս ոմն ՚ի զգօնից նոցին ժամանակակցաց դէր, շուրջանակի ունելով չորեքդիսի դիւատիչս, յորոց եւ լիւապն՝ յեղեղակք ծովուն. եւ ոմն յայժմու արեւմտեան դրչաց՝ տակաւին գաղտնիս եւ տեւողութեամբ մի պատմութեան համարի՝ զայնօրինակ եւ զայնքան բաւել տեւել տէրութեան Բուրխնեանց յայնպիսի դիրս։ Թող եւ զբազմապատիկ յատուկ կերպարանս այնր ժամու տնտեսութեան՝ ազգայնոցս՝ որ առանձին եւ որ ընդ քրիստոնեայ եւ անքրիստոնեայ տէ-

տայ (Ֆրատ), ապա ՚ի Կուր դետոյն, անդուստ ոլորեալ զԿասպիական ծովափամբ՝ խոտորէի յօտարախառն Տիգրիս, ՚ի հունեւանել ՚ի բնահովիտս՝ Հայոց յերասխայն եւ յԱրածանոյ, եւ դառնալ ՚ի Փոքր Հայս եւ աւարտել ՚ի Կիլիկիա. իսկ այժմ՝ աւադիկ հակառակ չըմամբ՝ ուր զկատարածն առնել կամէի՝ անդ առնեմ սկիզբն՝ եւ աւարտ. (անստոյգ ժամանակի թողեալ՝ եթէ աջողիցէ թափել մասն ինչ ՚ի միջոյն, եւ երբ զհարդ եւ է հանել ՚ի լոյս)։ Բայց պատճառ գլխաւոր՝ ՚ի յոգունց աշխարհաց նախընտիր առնելոյ զՍԻՍՈՒԱՆ, որպէս հաւանեցայ կոչել Կիլիկիա եւ ծանուցի զպատճառան (յէջ 59), այս է, զի ՚ի վաղուց հաւաքեալ էր իմ գիտելիս՝ յաւէտ պատմականս՝ զայս աշխարհի, եւ նշանակեալ համառօտիւք, զորս ոչ էր դիւրին լուծանել եւ վերծանել յետամնացիցն իմոց. իսկ վերստին հաւաքել նոցա, թէպէտ գուցէ լիադոյն եւս, այլ կրկին եւ երկար լինէր վաստակ. վասն որոյ բուռն հարկ թափել ՚ի կորստենէ զայնքան թռուցեալ եւ հեռացեալ ամաց եւ ժամուց գիծս եւ նիւս, եւ ամիոյնել (թէ եւ ոչ զբովանդակն) յայտ մատենի։ Ընդ սմին եւ մերձաւորութիւն ժամանակի քաղաքական անցից ազգայնոցս յայտ նահանգի, համարիմ՝ թէ հետաքննելի զսա ընծայեացն քան զբնաւս, թէպէտ եւ ըստ այլ տեսութեանց՝ առաւելուցուն հրապոյրք աշխարհաց Մեծաց Հայոց. բայց չիք եւ ոչ մի իբրեւ զՍիսուան՝ որ կարիցէ կցորդել զսերկեան ազգիս ընդ երկկեանն ժամանակի, յորում տակաւին անձնիշխանութեամբ քաղաքավարէր ի միջի եւ ընդ այլոց ազգաց. միանգամայն եւ երկար տեւողութիւն տէրութեան համազգեացս աստ՝ ՚ի միջի չհամազգեացն կալով, այլ եւ՝ որպէս ոմն ՚ի զգօնից նոցին ժամանակակցաց դէր, շուրջանակի ունելով չորեքդիսի դիւատիչս, յորոց եւ լիւապն՝ յեղեղակք ծովուն. եւ ոմն յայժմու արեւմտեան դրչաց՝ տակաւին գաղտնիս եւ տեւողութեամբ մի պատմութեան համարի՝ զայնօրինակ եւ զայնքան բաւել տեւել տէրութեան Բուրխնեանց յայնպիսի դիրս։ Թող եւ զբազմապատիկ յատուկ կերպարանս այնր ժամու տնտեսութեան՝ ազգայնոցս՝ որ առանձին եւ որ ընդ քրիստոնեայ եւ անքրիստոնեայ տէ-

րութեանց, յերի՝ եւ երբեմն կցորդ գողով երկոցուն հակառակամարտիցն՝ զընտելութիւնս ընդ արեւմտեայցն եկեղեցւոյ, լեզուաց եւ հրահանգաց, զգործակցութիւն ընդ վաճառական ընկերութեանց, զխնամութիւնս ընդ յոյն եւ փռանկ թագաւորական եւ իշխանական տանց եւ տոհմից, զհաղորդակցութիւն շահու եւ տեսութեանց եւրոպէական պետութեանց։ Յաւելցի՝ ի սոսին եւ եզական դիրք երկրին, միակ ի Հայաստանեայտ հուպ եւ պատեալ ի կենսատու եւ շահաբեր ծովէ, յորոյ կակուղ կոհակս թուէր իմն պարզել Այսասա՝ զբարգաւաճ ծոց իւր՝ հայակիրիկեանն Սիսուան, յետ հաստ առնելոյ զթիկունսն ի հարըստակողն Տաւրոս։

Յեզամիտութիւնը դիպաց եւ դրակցաց՝ քան համաքատակ հոսանք ժամանակի՝ փոխակերպեցին, ողորկեցին, ապա եւ մաշեցին զգաղթականն հինաւորաց Հայոց՝ յայսմ աշխարհամէջ մարզի կիրիկիոյ, ի բովանդակ յառաջնումն երից դարուց հարստութեան Ռուբինեանց՝ տակաւին նախնականն նշմարի ի նոսա տիպ՝ խոթոռ եւ հուժկու, յաւելուածով մահու չափ իմն վայրենախառն պնդութեան յասպատակել ի կորզել զկայս եւ զկայսնս՝ յունական կուսակալաց, առ ի բնակութիւն եւ ի պատըսպարան մըկոցն եւ խուսելոց ի սկիւթական բռնութենէն, յերկրորդումն՝ չնաշխարհիկ հանճար Մեծին Լեւոնի՝ յանկարծօրէն թօթափեալ զերեւոյթն եւ զկոչումն Լեւոնի, փոփոխէ կամ պատուաւորէ յարեւմտեան նրբութիւն, գողջիր ամենայն տարազու, ի վարսից հերաց եւ յազանեւեաց՝ մինչեւ ի ծէսս, ի բարբառ եւ յօրէնս (Ասսիզս) Փռանկաց եւ Լատինաց, եւ բազում մասամբ յառաջագէմն յարեւելեայս Հայկազն, առաջին թերեւս եւ միակ ի նոսին գտանի եւ ի նկուկցութիւն եւ յոգի խաչակրաց։ — Աշխոյժք Լեւոնի եւ երկոցուն Հեթմեանց՝ որոց ժամանակ իշխանութեան բոլորէ զողջոյն զգարն երկրորդ, չեն ինչ նուազ յաշխոթից հետեւողացն Կոփրետեայ, Տանգրեայ եւ Պալտինեանց։ ոչ անփառունակք եւ անօգուտք՝ նահատակութիւնը մերայոցս՝ յանձուկ սահմանիւրեանց, քան զյոլովս յանձակ եւ յանշահ շահատակութեանց՝ նոցին՝ Անդրաժովեայցն։

Նոյն ոգի կամ միութիւն աւագութեան եւ գահասիրութեան՝ վառի եւ ճարակի եւ յորդիս Ռուբինի եւ Հեթմոյ, յորմէ եւ բռնաբարութիւնը ի թագ, ըզմակերտութիւնը ի թագուհիս, հարստահարութիւնը վիճակաց, նուաճումնը ամրոցաց, ելեւելք պարոնայց զմիմեամբք։ որպէս յայտնապէս է տեսանել զայսոսիկ յետ մահուան առաջնոյ թագաւորին, եւ յայտնագոյն եւս ի բազմաթիւ եւ յեռանդուն որդիս Բ Լեւոնի։ Ի փոթորկեալ հոլովման այնր դարու, (որպէս երբեմն եւ յառաջն, սակաւ ինչ եւ յետոյ), ի յետնումս յայսմ թատեր հայկական ինքնավարութեան, մերձ ընդ մերձ յարեան ի հանդէս կերպարանք նշանաւորք եւ փարեկիք, խոժոռք եւ քնքոյք, եւ մի ըստ միովէ պարելով ի տատանեալ յատակի անդ՝ աեղի ետուն, ոչ աննշոյս թողլով ուրուականս ի տրամադարդեալ տախտակի հայկական յիշատակաց։ Յետ դիւցախառն եւ ամեհամուղ պայազատաց Ռուբինի, Թորոսեանցն եւ Լեւոնեանց, որոց վերջին՝ կորիւնն ստեփանեան՝ ի գաղաթն զօրութեան եւ փառաց հասուցանէր եւ հաստատէր զպետութիւնն, յաջորդէ ազնուագոյնն ի սեռս պարոնայցն, Հեթմեանն տունն, նահապետութեամբ Մոզոնն Կոստանդնի, բեռորդւոյ Լեւոնի կենդանի խնամք արձանացեալ յորելեան մի ամաց՝ մատաղատունկ գերդաստանին, յոր զուգէ զպայազատն արքայական՝ զազնուագոյնն Ջապել, ճարտար եւ ճապուկ հանճարով, առատ եւ հարկու ձեռամբ, անսայթաք վարելով զկառս տէրութեանն՝ լծեալս ժիրաժիր անդրութեամբ իւրաժին զաւակօքն։ Առ նովալ եւ յետ նորա՝ հօրամօյնն Հեթում՝ երկարակեացն իշխանութեան քան զամենայն տեարս Սիսուանայ՝ որ յառաջ եւ որ յետոյ, ընդ գայն բազմապատիկ արիական եւ աշխարհաչն գործոց արգասեօք։ մի ի ցանկալի եւ արժանափառ թագաւորական կերպարանաց, ոչ լոկ ի տոհմայնումս այլ եւ ի համաշխարհական պատմութեան, եւ յիւրումն ժամանակի՝ ոչ ումեք երկրորդ, բայց արդեօք Սրբոյ Լուդովիկի Փռանկաց թագաւորի։ ոգի եռանդնոտ, ասպետ կատարեալ եւ բազմաց կատարիչ ասպետաց՝ բնկաց եւ օտարաց։ Բաջակորով եւ հանճարեղ։ շինարար եւ զուարթարար։ խորա-

գիտութեամբ հօրն եւ իւրով բաղցրութեամբ՝ ամօքեալ զթաթարական բրտութիւնն եւ յիւր զօրաւիգն կրթեալ, որպէս եւ ինքն ոչ անգոր զօրաւիգն հզօրին Հուլաղուի, կայ աներկեւան յիւրումն կայի, յաջ եւ յահեակ ընդլայնելով զնոյն, բերկրեցուցանէ բազմանուագ հանդիսարանօք զաշխարհն համօրէն՝ որպէս գլխ տուն նահապետական, յաճախ 'ի նոյն հրաւիրելով խըրախճան՝ զիշխանազունս արեւելեան Լատինաց, յորոց ոչ սակաւք փեսայացեալ էին յիւր կամ յիւրայոցն դստերս եւ 'ի քորս. ասպարիզական պերճանօք եւ հեծելութեամբ կայտառ ձիաւորաց իւրոց ոչ վիայն նախանձելի յարգարեալ զՍիսուան, այլ եւ 'ի նոյն յանկուցեալ եւ դասակարգեալ զարուորագոյնս 'ի փռանկական երիտասարդաց... Ս, յ, մարդ ոչ անխոցոտելի 'ի բաղդէ, յետ քառասնամեայ գգուանացն վտանգեալ երկուստեք, յեգիպտականն ռիսութենէ եւ 'ի Թաթարաց թուրութենէ, զոհելով զանգին կեանս տարիալի որդեկացն՝ 'ի սուր եւ 'ի գերութիւն, վասն փերկութեան հայրենեաց եւ ազգի՝ 'ի մազկախն հորստեան հասկոյ, ուր զէն բթէր եւ անկարողանայր՝ անգ զհանճարն սրեալ, աջողէր տակաւին կարկատել զխրամատ պետութեանըն. յոր՝ կայկայեալ զծիրանածին անդրանիկն սքանչելապէս գերեթափ, բարեաւմնայ ասէ այնուհետեւ ամենայն փառաց և փայլմանց, եւ յանձկութեան միանձնական խըցկան՝ մակարական անուամբ եւ կրօնիւք՝ փոխի յանանց թագաւորութիւն, փառաւորեալ 'ի կեանս, գերափառ 'ի մահուն. հետեւող յայտմ շաւղի եղեալ հոմանուան իւրում՝ տեառն Լամբրունի, եղբօր սքանչելւոյն Ներսիսի, եւ հետեւող ինքեան թողեալ զերկոսին եւս համանուանսն, զեղբօրորդին Հեթում՝ տէրն Կոստիկոսի եւ Պատմիչն, և զթուռն իւր՝ Հեթումի։

(Շարունակելէ)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕՐԱԳԻՐ

ԵՒ

ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆ

(Շար. 3789 թուէ.)

Մինչեւ 1887 դարն Սպանիա լրագրութիւն չէր ունեցած. Տեպիո րէ Մարքիս առաջին թերթն ալ արքունեաց պարտական էր իւր հրատարակութիւնը։ Կարողոյ Գի թագաւորութեան վերջերը հազիւ 40 - 50 չափ գանազան լրագիրներ կը հրատարակուէին (1757 - 1792)։ Ս, յ, մամուլը իւր ազատութիւնը կը գտնէր Ֆէրատինանտոս Էի մահուանէն վերջը. 1834 թուակառնէն յառաջ ազատական թերթեր եւ զաւելչտական հրատարակութիւնք արգիլուած ըլլալով Սպանիա, կը գաղթէին Լօնտրա եւ Փարիզ։ Սպանիոյ մէջ քաղաքական լրագրութիւնը ոչ այնքան ներգործած է ժողովրդեան մտքին վրայ որքան Ֆրանսիոյ, Իտալիոյ, Եւրոպայի, Եւ Մարքիս, Եւ Տեպիո, Եւ Նօմբրօ եւ այլ զաւելչտական եւ երգիծական թերթեր։ Լրագրութեան գլխաւոր գէնքն է միշտ հեղինակութիւնն եւ երգիծանք։ Հանդէսներուն գլխաւորները համարուած են Ռեվիւս Ինքանիս, Ռեվիւս րէ Մարքիս. պատկերազարդներէն անուանի են Եւ Մարքիս Ռեվիւսիս, Կլոս, 850 չափ պարբերական հրատարակութեանց 1/3 ն քաղաքական թերթեր են որոց կարեւորագոյնքն կը համարուին Լա Էքօ, Եւ Տեպի, Եւ Գօմբօ, Եւ Իմբարիսիս, Եւ Սեյի, Ֆրանսիս (գարլոսեանց գործիքը), Եւ Բօմբիսիս եւ։ Ս, ելի զարգացեալ կը նկատուի Բորթուգալի լրագրութիւնը. հոս ալ մինչեւ 1834 կարեւորութենէ զուրկ էին լրագիրք. բայց երբ Մատիա տա Կլօնիա դահը ելաւ, քաղաքական լրագրութիւնըն ալ նոր թուիչ առաւ. պաշտօնական թերթին է Տեպիո րէ Լեզոս (1861) որ 1825 ին ուրիշ անուամբ սկսած էր։

Մի քանի լրագիրներ Սպանիերէնով խառն գրուած են, ինչպէս Բրօկիսիս Ֆրանսիս, Ռե-

վեհա Բենեդիկտուս եւ երկուց թագաւորու-
թեանց միացման խնդիրը կը մշակեն : Լիզ-
պոնի մէջ տրկենաց խմբագրութեամբ կը հը-
րատարակուի Voz femenina անուն հանդէս
մը եւ Գօլմարիայի ուսանողներն կը հրատա-
րակեն ուրիշ հանդէս մը Chrysalida, գի-
տական եւ դրական :

Ոչինչ նուազ յառաջադիմութիւն ըրած
է յունական մամուլը : 1811 էն ի վեր . այս
թուականին առաջին անգամ Անթիմոս
Ղազիս Վիէննայի մէջ ձեռք զարկաւ հրա-
տարակել Լյօթ'ս Էթ'ս թերթը որ տեւեց
մինչեւ 1821 . նոյն ժամանակները 1819-21
տեսնուեցաւ Ֆիլօթի'ս Թէլ'դրաֆ'ս Մէլնս
ի Փարիզ, բայց բուն Յունաստանի մէջ լը-
րագրութիւնը ծագում առաւ անկախու-
թեան պատերազմէն եւ քաղաքական թեր-
թերու առաջինն եղաւ Էլէնի'ս Սալթի'ս
(հելլենական փող) 1824 ին :

Հետզհետէ ի հանդէս եկան զանազան քա-
ղաքներու մէջ՝ Խորա, Միսոլունիի, Նէապոլիս,
Աթէնք, Բաթրաս, Էլէնի'ս Խրօնի'ս, Ֆիլս Թո-
նօ'ն, Ելէնի'ս Էֆէ'թի'ս պաշտօնական թերթ
որ կը հրատարակուէր Գաթօ տի'սթրիայի
ուղղութեան ներքեւ : Ասոր ոտիս տես-
նուեցաւ Աթլէն' Բօլիօթի'ս թերթը,
մինչդեռ Ալէնի'ս ազատական թերթը
կը հարուածէր զՍթի'ս Ֆրանսերէն եւ յու-
նարէն գրուած պահպանողական լրագիրը :
1825 ի տալագրական օրէնքը լրագիրներն
երաշխաւորութեան ենթարկելուն հա-
մար, անոնց անկման պատճառ եղաւ .
1844 ին 20 ի չափ պարբերականներ
ունէր Յունաստան որոնք կ'զբաղէին
քաղաքական խնդիրներով, ասոնցմէ Էլթի'ս
(յոյս) Անգլիացւոց, Էթ'ս (դար) Ռուսաց շա-
հերը կը պաշտպանէր, ինչպէս Օպի'ս-Վալէս-
ի'ս թերթը Յունաց եւ Ֆրանսացւոց :

Ռուսաց եւ Թրքաց թշնամութիւնը նոր
զարկ մը տուաւ յունական մամուլին . 1852ին
սկսաւ Մի'սօս- Կոէ'ս Ֆրանսերէն թերթը
եւ Բանէլլի'ս ուրիշ թերթ մը որ 1855 էն
ի վեր կը հրատարակուի Գորֆու :

Յունաստանի մէջ երեւցող առաջին գի-
տական հանդէսն եղած է Էլէնի'ս 1830 ին,
տնօրինութեամբ Մուսթօքի'սիս եւ Գօգօնի'ս
գրաւէտներու : Գօրֆուի մէջ երեւցան
Անի'սօլլի'ս Իմի'ս, Յունարէն, Անգլիարէն
Իտալերէն :

1877 ին Ժոնալ Արթի'սթի'ս Բիթաքիս
եւ Ռանկապէի խնամք : Զանց կ'ընենք յի-
շատակել զանազան ուրիշ թերթերու ա-
նուններ : Այսօր Աթէնքի մէջ բացի 25
զանազան թերթերէ կը հրատարակուին
Ֆրանսերէն Մէսթի'ս Մի'սթի'ս, Ժոնալ Մի-
թի'ս, Լա Կոէ'ս թերթերը եւ Ռասէնի'ս Էլէ-
նի'ս իտալերէն լրագիրը :

Զաւեշտականներն են Սէ Խօնի'ս, Ռա-
ժի'ս . բայց Աթի'սթի'ս Յունարէն Շարի-
վարին համարուած է . նիւթերու ընտրու-
թիւնն եւ նկարներու նրբութիւնը եւրո-
պական առաջին կարգի պատկերազարդ հը-
րատարակութեանց կարգը կը դասեն զայն .
ուստի եւ բոլոր Յունաստանի մէջ մեծ ըն-
դունելութիւն գտած է Պ. Թահնուս Անի-
նոսի թերթը : Կան մի քանի թերթեր
որք անհատական քաղաքականութեանց կամ
կուսակցութեանց կը ծառայեն, ինչպէս
Օոս Պ. Թրիքուբիի, Բրօյի Պ. Տէլիեանիի,
մինչդեռ Էֆէ'թի'ս, Բանէլլի'ս, Աթթօ-
թի'ս խմբակներու գործիքներ են : Ամբողջ
Յունաստանի մէջ 80 էն աւելի պարբերա-
կան եւ ամենօրեայ հրատարակութիւններ
կան :

Չկայ ըսենք նաեւ պետութիւն կամ
ազգ թէեւ փոքր կամ նոր մտած քաղաքա-
կրթութեան ձամբուն մէջ՝ որ չունենայ
իւր թերթ . սակայն լրագրութեան եւ
մամուլի զարգացումը համեմատական է ազատ
քաղաքակրթութեան մը զարգացման հետ :

Տեսէք Ճաբոնի համար ինչ կը գրեն .
դեռ 20 տարի չ'ընէր լրագրութիւնը մուտ
գրած է հոն, եւ այսօր 2000 ի կը հաշուեն
լրագիրներու թիւը . եթէ ստոյգ է որ բո-
լոր Ասիոյ մէջ 3,000 թերթ կը հրատարակ-
ուի այժմ, Չի'ս Ճաբոնի բաժնին կ'իյնայ(*) :
Մինչդեռ Չինաստան, որ լրագրութեան
օրրանը համարողներ կան, շատ ետ մնացած
է իւր դրացիէն : Չինացիք լրագիրն ալ
թերեւս հնարեցին, բայց իրենց լրագրու-
թիւնն ալ անշարժութեան դատապար-
տուած կը մնայ երկար դարերէ ի վեր : Բի'ս
Բոս որ չիներէն Մայրաքաղաքի լրագիր կը
նշանակէ եւ զոր Ուրուպակցիք Կոլէ'ն ալ Բէ-

(*) Հիշիսհիմպուս, Նիշի'սիշի'սիմպուս, Զոյասհիմ-
պուս, Մէյլի'սիմպուս, այս անունները Ճաբոնի
գլխաւոր լրագրաց անուններն են :

էն անուանած են՝ Թօնկերու զարմին ժամանակակից կը կարծուի։ (Քրիստոս թիւ 7 կամ 8 ԲԳ դար)։ Այս պաշտօնական թերթը օրը 3 անգամ կը հրատարակուի զանազան գոյներով, թէեւ դեղինը որ կայսերական գոյնն է ընտրելագոյնն է համարուած։ Պարունակութիւնն է հրովարտականեր, պաշտօնական գրութիւններ եւ լուրեր։ Ուստի եւ կը նկատեն զայն իրբեւ մին Ձինաց ժամանակակից պատմութեան գլխաւոր աղբիւրներէն։ Այդ գտնուին մի քանի ցանցառ թերթեր ալ չիններէն, բայց անոնք անգլիական լրագիրներու թարգմանութիւններն են, կամ անոնց չինական տպագրութիւնը։ Ինչպէս Հոսթոն Բոսոն Նոթիս Զինս Ենթին անգլիական թերթին չիններէնն է։ Ձինաստանի մէջ ամենէն աւելի տարածեալ թերթն այս է, որովհետեւ վերջին ժամանակները 140 հազար ֆրանքի գնելու առաջարկներ եղած էին բայց արտօնատէրը չէր ուզած վաճառել։ Պետութիւնը կը նշկատէ զայն իրբեւ օգտակար տեսուչ մը գաւառական վարչութեանց վրայ, եւ զօրաւոր օժանդակ մը իւր ներքին քաղաքականութեան առանց այսու ամենայնիւ պաշտօնական գոյն տալու անոր։ Այս լրագիրն 1 թիւը կը վաճառուի 1 սաբէք, 110 փարայի ոչ միայն Շանկայի մէջ ուր կը հրատարակուի՝ այլ նաեւ Եւրոպայի առեւտուրին բացուած ուրիշ քաղաքները։ Եւրոպացիք եւ Ձինացիք մեծ ախորժով կը կարդան զայն քանզի մինչդեռ ատոնք կը խելամոլին եւրոպական քաղաքակրթութեան, միւսները չինական կարծիքներու և գնահատութեանց օտար չեն մնար։

Վերջին Ֆրանքօ Ձինական պատերազմին տեսն 3 օրեայ հանդէս մը հրատարակուեցաւ պատկերազարդ, Հոսթոն Բոսոն։ Ձինացիք անյազաբար կը դիտէին ու կը կարդային այս լրագիրը որ ժամանակակից դէպքերը կը նկարագրէր եւ կը պատկերացունէր։

Շանկայի բնիկ ժողովրդները չորս տարիէ հետէ կլիսալաբաթական թերթ մը կը խմբագրեն եւ կը հրատարակեն Ես-Էն-Թոն (գիւն արտանի լրոց) անուամբ։ ասոր նպատակն է ընթերցանութիւն տարածել կաթոլիկ Ձինացւոց մէջ ջանալով համոզել Պետութիւնն եւ մանտարէնները թէ

ժողովրդներուն ուխտը անշահախնդիր մարդասիրական ուխտ մ'է։

Պետւոճիստան եւ Աֆղանիստան լրագիր չ'ունին, այլ այնպէս չկրնար ըսուիլ Պարսկաստանի համար։ Կոն կը հրատարակուին մի քանի թերթեր որոնց ունինք ի ձեռին մի քանի օրինակները։ Թուղթը եւ տառերը թրքականներէն շատ աւելի մաքուր են, թերեւս անոր համար որ ամենօրեայ չեն եւ քիչ ծախքի կարօտ են Իսկ ներքին խմբագրական արժէք մը չկրցանք տեսնել, զի սոսկ լուրեր կը պարունակեն օտար լրագիրներէ քաղուած։ Հետաքրքրական են բաժանորդագրութեան պայմանք, զօր. Շէրէֆ (ձայն) պատկերազարդ թերթին տարեկան բաժնեգիրն նշանակուած է 1 թուման կամ 2000 տինար։ Ընթերցող (ծագում կամ վերածնունդ) Պարսկաստանի մէջ 1000 բէնչչահի, ուրիշ տեղ 19,000 բէնչչահի։ Իրան, պաշտօնական, Թէհրանի մէջ տարին երեք թուման կամ 8000 տինար, դուրսը 3 թուման կամ 3000 տինար։

Թէհրանի մէջ տասնեւհինգ օրն անգամ մը կը հրատարակուի Էսթ Բէր Ֆրանսերէն չորս երեսով և երկու սիւնակով։ պաշտօնական գոյն մը ունի այս թերթը որ որքան փոքրիկ դիրքով այնքան անի է պարունակութեամբ։

Ափրիկէ բեղմնաւոր չէ լրագրութեամբ։ Հազիւ 200 թերթ կը հրատարակուի զանազան գաղթականութեանց մէջ։ Միայն Եւրոպայի բաժնին ընկած է 20ի չափ լրագիր թրքերէն, արաբերէն, անգլիերէն, ֆրանսերէն, իտալերէն, յունարէն։ Մենք ալ ունեցանք Աբսաէնէն կիլիկիոյ Վեհապատիւ Մկրտաիչ Կաթողիկոսի առաջնորդութեան տարին, խմբագրութեամբ Ա. Մուրատեան էֆէնտի, այլ հազիւ երկու երեք թիւերն տեսնուեցան այդ հայերէն լրագրոյն որ շուտով դադարեցաւ, ցոյց տալով թէ ինչ որ հայ է խորին արմատ չկրնար ձգել փարաւոններու հողին վրայ։

Երկրագնդիս 3 մասերուն մէջ հրատարակեալ լրագիրներուն թիւը կը հաշուի 35000, իսկ ամբողջ բնակիչներուն թիւը 1 միլիար հաշուելով, կը հետեւի որ 28600 մարդու մի լրագիր կ'իյնայ։ Եւրոպայի կուտան 20 հազար լրագիր։ մեծ պետութեանց մէջ Գերմանիա ամենէն աւելի իսկ Ռուսիա ա-

մենէն քիչ լրագիր ունեցողներն համարուած են հետեւեալ կարգաւ .

Ա. Գերմանիա ,	5500	թերթ
Բ. Անգլիա ,	4000	»
Գ. Ֆրանսա ,	»	կա՛ միօրը ինչ նուազ
Դ. Իտալիա ,	1400	թերթ
Ե. Աւստրո Հնգր .	1200	»
Զ. Սպանիա ,	850	»
Է. Ռուսիա հազիւ	800	»

Իսկ լեզուաբանական տեսակետով աշխարհիս մէջ հրատարակեալ լրագիրներու համար հետեւեալ դասակարգութիւնը եղած է .

17500	Անգլիերէն
7800	Գերմաներէն
6850	Ֆրանսերէն
1670	Սպաներէն

Մ . Ն . ՆՈՐԻԿԵԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

ՎԱՆՏԵՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՂԸ

ԵՒ ԹԱՂՈՒՄԸ

Հարուստներու թաղաւորն ալ մեռաւ :

Անցեալ երեքշաբթի առաւօտեան ժամ 7 ին վի՛րիւմ Հ. Վանտէրպիլդ կ'արթնար հանգիստ եւ առօրջ եւ ըստ սովորականին իւր նախաճաշն ընելէ յետոյ երկու զաւակաց հետ կարճ խօսակցութիւն մը կ'ունենար մինչեւ ժամ ութի . եւ անկէ վերջ մի քանի այցելուներ ալ ընդունելէ յետոյ , փողոցը կ'ելնէր մի քիչ ժամանակ անցնելու համար . վերջապէս կէսօրին իւր ընտանեաց հետ մէկտեղ կերակուր ուտելով , հանրածանօթ միլիոնատէրն ընդունելութեան կահազարդեալ ու փառաւոր սենեակին կ'երթար այցելուի մը գալստեան սպասելու համար , ուր քիչ մը կենալէ յետոյ իւր այցելուն կ'ընդունէր եւ պա՛հ մը վերջ Ըսգէյդըն Այլընտի երկաթուղեաց վրայ խօսիլ կ'սկսէին միայնակ : Վանտէրպիլդ այս պահուս նստած էր աթոռի մը ծայրն . միլիոնատէրն յանկարծ կ'իյնայ երեսին վրայ . այցելուն կաթուածահար հարստին օգնելով , զայն սենեկին մէկ անկիւնն պառկեցընելէ յետոյ լուր կուտայ հիւանդին ընտանեաց , որք երբ ընդունելութեան սրահը մը տան , Վանտէրպիլդ ննջած էր արդէն յաւիտենական քունով . իւր մարմինն տաք էր ու պոկունքները թաց էին տակաւին : Աւելորդ է մտահոգութիւնն նկարագրել :

Վանտէրպիլդի կաթուածահար մահուանէն անմիջապէս յետոյ ծառաներ զրկուեցան ամէն կողմ բժիշկներ կոչելու համար : Քիչ վերջ տօթթէօր ճէյմս Վ. Մըսլին , ընտանեաց բժիշկն , եւ ուրիշ քանի մը անուանի տօթթէօրներ ժողովեցան Վիլիլմի դիակին բոլորտիքը , սակայն սոքա ոչինչ կրնային ընել :

Վանտէրպիլդի դիակն պաղած էր , երբ իր չորս տղաներն , որք հեռաձայնով կանչուած էին Կրանթ Սէնթիլ Տիփայէն , եկան իրենց անշնչացեալ հօր քով , ու սուրբ Բարթոլոմէոս եկեղեցւոյ մի պաշտօնեան հասաւ , հանգուցելոյն մարմինն տան ուրիշ մի սենեակն փոխադրելու ու պէտք եղած պատրաստութիւններն ընելու համար : Ժամ երեքին ատեններն ննջեցելոյն տունը հասան շատ մը բարեկամներ ինչպէս նաեւ քանի մը երկաթուղեաց ընկերութիւններու նախագահներ ու յիշեալ եկեղեցւոյ հովիւն , Հայր Սամուէլ Գուք , որք յուղարկուորութեան վերաբերեալ շատ մը կարգադրութիւններ ընելով թաղման օրն ալ որդեցին :

Նոյն օրը սեւերով պատուիլ սկսեցաւ Վանտէրպիլդի պալատանման բնակարանն , որ կը գտնուի Նիւ-Նորքի ամենէ երեւելի ալեքս-ին վրայ . նմանապէս սուղի նշաններ ու սեւեր բարձրացան իւր զաւակաց ու մտերմադոյն բարեկամաց տուներուն վրայ :

Հետեւեալ առաւօտուն կանուխ ժողովուրդն կ'սկսէր այցելել միլիոնատիրոջ տունն իրենց վշտակցութիւնն յայտնելու համար հանգուցելոյն ընտանեաց . նոյնպէս Փարիզէն ու Լոնտոնէն քանի մը հեռագիրներ կը հասնէին ննջեցելոյն տիկնոջ : Պահ մը հետոյ սուրբ Բարթոլոմէոս եկեղեցւոյ պաշտօնեան նորէն այցելելով Վանտէրպիլդի տունն , հրամաններ առաւ ու անմիջապէս մեկնեցաւ Սգէյդըն - Այլընտանուն կողմն դնալու համար , ուր Նիւ-Տրորքի մէջ գտնուած ընտանեկան դամբարանը պիտի բանար՝ հոն ննջեցելոյն առժամանակեայ տեղ մը պատրաստելու համար :

Կէս օրէն քիչ մ'առաջ երեք արձանագործներ զայլով միլիոնատիրոջ մարմնոյն կաղապարն շինեցին ու զմասելով զայն տեղաւորեցին իր անկողնոյն մէջ «մեռելի պաշտօնեայ» ներուն հետ մէկտեղ:

Նոյն օրն Վանտէրպիլդի բնակարանն այցելող անձանց մէջ հետեւեալներն են նշանակութեան արժանի, որոց քով դիպուած կայ այժմ տօլարներու ահագին խուրձեր. Սիտնէյ Տիլլօն, Բիէրբոնդ Մօրկան, Ճէյ Կուլտ, Հէնրի Գլուս, Սամուէլ Սլօն ևն ևն:

Հետեւեալ օր նշանաւոր անցք մը տեղի չունեցաւ. միայն թէ հանգուցեալ միլիոնատէրն դրուեցաւ դադաղին կամ սնտուկին մէջ, որ շինուած էր Պ. Ճօն Ըսթլօծի գործարանին մէջ. այս անձ շինած է նաեւ հանգուցելոյն հօր Գորնէլլոս Վանտէրպիլդի, անցեալներն մեռնող կարգինալ Մըսքլօքի, Ժօն Ճէյքսլ Ասթօրի եւ այլոց դադաղներն: Ընթերցողք կրնան երեւակայել թէ ո՞րչափ մեծածախ ու փառաւոր էին «հարուստներու թագաւորին» կրկին սընտուկներն. սորա շինուած էին սեւ եփեւնոսէ որոց մէջ քաշուած կար մետաքսեղէն հիւսածոյներ. աւելորդ է ըսել թէ սընտուկներու ամէն կողմերն կը տեսնուէին արծաթեայ զարդեր, արտաքին սնտուկին վրայ ալ գրուած կար հետեւեալն արծաթեայ գրերով. «Վիլիւմ Հ. Վանտէրպիլդ, ծնեալ յուլիս մայիսի 1821, հանգուցեալ ի Տէր յուլիս դեկտեմբերի 1885»:

Ուրբաթ առաւօտ, արեւու հետ մէկտեղ մեծ բազմութիւն մը զարթնած՝ Վանտէրպիլդի բնակարանին առջեւ կանգնած կը կենար թաղման յուղարկաւորութիւնն տեսնելու հետաքրքրութեամբ: Ժամ 7 ի եւ 8 ի մէջտեղ «մեռելի մարդերն» գալով Վանտէրպիլդի մարմնոյն քով դնացին. այն սենեակն յորում կը ննջէր միլիոնատէրն, զարդարուած էր բանի մը փունջ ծաղիկներով ու մէկ երկու պսակներով. նմանապէս՝ ինչպէս որ օրէն է՝ սեւեր կ'երեւէին սենեակին ամէն կողմերն. պսակներու եւ ծաղկանց քիչ լինելու պատճառն ուրիշ բան մը չէր, եթէ ոչ կարգադիր անձերն ի ըսկըդան ծանուցեր էին բարեկամաց ու ծանօթից թէ ո՞րեւէ ծաղիկ, պսակ կամ փունջ չի պիտի ընդունուէր բացի այն բանինէն որք պատրաստուած էին ընտանեաց

կողմանէ եւ որք արդէն կը գտնուէին տան մէջ: Ժամ 9 ին առաջին պաշտամունքն տեղի ունենալ սկսան հանգուցելոյն տան մէջ սուրբ Բարթոլոմէոսի եկեղեցւոյն քահանայից կողմանէ. պաշտամանց ներկայ կը գտնուէին Տիկին Վանտէրպիլդ, իւր զաւակներն ու քանի մը մոտերիմ բարեկամներ: Աղօթքներն վերջանալէ յետոյ հանգուցելոյն Տիկինն, Մարիա Լուիզ Վանտէրպիլդ, վերջին անգամ մնաս բարեւ մը նուիրելով իւր ամուսնոյն, նորա երեսն դիտեց, ուսկից յետոյ գոցուեցաւ սնտուկն: Աւելորդ է ըսել թէ Վանտէրպիլդ հագուած էր այնպէս, ինչպէս որ կ'զգենուր իւր ողջ եղած ատեն. իւր սեւ զգեստն, ձերմակ շալիկն, գեղեցիկ փողպատն եւ ձեռնոցներն աչքի կը զարնէին. մօրուքն ու մազերն խնամով սանտրուած էին, ու ձեռքերն կը կենային սրտին վրայ. իւր դէմքն տեսնող մը կը կարծէր թէ մեռած չէ, այլ կը ննջէ այնպէս հանգարտ, ինչպէս մը բընանար երեսուն տարիներ առաջ տակաւին երիտասարդ եղած ատեն:

Պահ մը յետոյ Վանտէրպիլդի դադաղն «մեռելաբարձ» ի մը վրայ դրուելով քալել սկսեց դէպի սուրբ Բարթոլ. եկեղեցին, մեծ բազմութեան մը հետ մէկտեղ. մեռելաբարձ կառքը, աւելորդ է ըսել թէ իր տեսակին մէջ ամենէ ընտիրներէն մին էր, որուն չորս կողմը ապակիներով ծածկուած էին. կառքին տանիքն ալ զարդարուած էր արհեստական սեւ փունջերով: Երկու սեւ երիվարներ կը քաշէին զայն, որոց վրայ նետուած կային մետաքսէ հիւսուած սեւ ցանցառներ եւ ուրիշ քանի մը արծաթեայ զարդեր: Դադաղը կը տեսնուէր կառքը պատող ապակիներէն: Դադաղին վրայ յարմարցուած կար քառաթեւ խաչ մը, ճիշդ այն կէտին վրայ, որոյ տակ կը հանգչէր ննջեցելոյն գլուխն: Թափօրն անցնելով Հինգերօրդ Սվենսէին մէջէն հասաւ 42-դ փողոցն ու քիչ մը վերջ մտաւ սուրբ Բարթոլ. եկեղեցին: Ներկայից մեծագոյն մասը չը կրցաւ մտնել եկեղեցւոյն մէջ, վասն զի տոմս չունեցողներն արտօնեալ չէին եկեղեցւոյ մէջ կատարուելիք պաշտամանց ներկայ գտնուիլ:

Սուրբ Բարթոլ. եկեղեցին հաստատուելէն մինչեւ ցայսօր չէր տեսած իր մէջ

այնչափ հարուստ մի խումբ, որչափ որ տեսած էր նոյն օր Վանտէրպիլի դադաղին եղերք. բոլոր ներկայ էրիկմարգիկ մետաքսեայ երկայն գլխարկներ կը բռնէին իրենց ձեռքերուն մէջ եւ հազուած էին այնպէս ինչպէս որ վայելէ հազուել միլիոնատեարց: Նմանապէս հոն գտնուող ուհիներն Միացեալ-Նահանգաց մէջ գտնուող հարստագոյն անձանց տիկիներն էին: Հանգուցելոյն դադաղին եղերք կը տեսնուէին նաեւ շատ մը շոգեկառաց ընկերութեանց նախագահներն ու շատ մը սլաշտօնեաներ: Բժշկական վարժարանի ներկայացուցիչներն ալ փութացեր էին ներկայ դառնալ այդ վերջին սլաշտամանց, աշակերտաց խումբի մը հետ. այսպէս ալ Քօլումպիա Քօլէճը իրեն ներկայացուցիչներն զրկած էր:

Եկեղեցին ծանր կերպով չէր սգաւորած, սակայն այն նստարանն որ Վիլիլմ Վանտէրպիլի կը վերաբերէր, սեւի մէջ կորսուած էր, եւ ոչ ոք չկար նստած անոր մէջ:

Պահ մը յետոյ երգեհոնն տխուր սկսեց հնչել, այնչափ տխուր որ կրնար արտասուք խլել ներկայից աչքերէն, եւ շատ անցած աւանդատան դռներն բացուելով ջրիւծի ֆօթըր գգեստանորեալ ներս մտաւ, որոյ կ'ընկերանային հայր Սամուէլ Քուք, հայր Քլամբիդ Էմ, որք գալով դադաղին առջեւ սկսեցին կատարել սլաշտամունքն ու արարողութիւնը:

Մինչ սուրբ Բարթ. եկեղեցւոյն մէջ աղօթքներ կը կատարուէին, դուրսը ժողովուրդն երթալով կ'ստուարանար: Երբ դադաղն ու անոր հետեւողներն դուրս ելան եկեղեցիէն ու խառնուեցան ներկայից հետ, բազմութիւնն աւելի ստուարացաւ եւ ուղի ինկաւ դէպի Վէսթ Շոր Ֆէրրի (նաւահանգիստ մը):

Շատ չանցած թափօրն հասաւ նաւահանգիստն, ուր Սաութֆելթ շոգենաւն կեցած կ'սպասէր, որոյ մէջ լեցուեցան հարիւրաւոր կառքեր ու դադաղակիրն: Վանտէրպիլի գերեզմանատեղին գնալու փափաք ունեցող շատ մը անձեր ալ լեցուեցան ուրիշ մի շոգենաւի մէջ իրենց կառքերով մէկտեղ: Բաւական ատեն ճամբորդելէ յետոյ հասան Սթափըլթոնի նաւահանգիստն ուսկից չորս մղոն հեռի էր Նիւ-Տրոր: Պահ մը վերջ թափօրն ճանապարհ

ինկաւ դէպի գերեզման, որուն հետ ընկերացաւ Սթափըլթոն սպասող մեծ բազմութիւն մը: Թափօրն անցաւ ծառերու ու դալարներու մէջէ. կոխեց այն երկիրներն ուր ծնած էր հայր Վանտէրպիլի անցեալ դարուն մէջ, անցաւ այն տեղերէն ուր հանգուցեալն երկար ատեն ապրած էր իւր կնկան հետ եւ վերջապէս քերեց այն շէնքերն զորս հայր Վանտէրպիլի կառուցած էր շատ տարիներ առաջ:

Վերջապէս թափօրն հասաւ ի Նիւ-Տրոր, ուր շինուած էր Վանտէրպիլիներու գերեզմանն, այսինքն մեծ ու չքեղ շէնք մը, միջնակարգ հարուստներու տուններէն գեղեցիկ: Դամբարանին երկաթեայ դուռն բացուած էր նոր մարմին մը ստանալու համար, որոյ մէջ քանի մը կարճ աղօթքներ կարդացուէլ յետոյ դադաղն զետեղուեցաւ, եւ դամբարանին երկաթեայ դուռներն փակուելով, հանգուցեալն մնաց գերեզմանին լուծեան ու ստուերին մէջ:

Ժամը չորսն անցած էր երբ յուզարկաւորք ժամանեցին ի Նիւ-Եորք: Վանտէրպիլիներն իրենց հօր բնակարանն հասնելէ յետոյ դատաւոր Բափալը ապահովութեան դրամատան մը մէջ գտնուող հանգուցելոյն մի երկաթեայ սնտուկն բերել տուաւ, որուն մէջէն հանեց Վիլիլմի կտակադիրն ու կարդաց առաջի ընտանեաց: Սակայն հետեւեալ օր միայն կտակն հրապարակուեցաւ: Շաբաթ օր կտակագրին օրինակը հաղորդուեցաւ լրագրաց, որ կը լեցնէր 2-3 էջեր: Սոյն դիրն թարգմանել անկարելոր կը սեպեմ: Գորնիլիոս Վանտէրպիլի, հանգուցելոյն հայրն, երբ մեռաւ, իւր 125 միլիոն տոլար հարստութեան 100 միլիոնը թողուց Վիլիլմ Վանտէրպիլի, իւր հարստութիւն ամբողջ մնալու համար: Վիլիլմ Վանտէրպիլի սոյն 100 միլիոն տոլարներն կրկնապատկած էր իւր ճարպիկութեամբ եւ այս կերպիւ կրցած էր լինիլ աշխարհիս ընչեղագոյն անձն:

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

ԱՆԳՆԻՍԱԿԱՆ ՀՆԴԿԱՍՏԱՆ

(Հար եւ վերջ)

Է.

ԼԵՁՈՒՆԵՐՆ ԵՒ ԲՆԻԿ ՄԱՍՈՒՆԸ

Հնդկաստանի մէջ խօսուած լեզուներուն մեծ մասը կը պատկանի երկու մեծ ընտանեաց, արիական եւ դրավիդեան։ Արիական լեզուներն անոնք են որք կը սերին սանսկրիտէն, որ կը վերաբերի նոյն այն բունին ուստի ծագումն առած են եւրոբոսական շատ լեզուներ, յոյն, լատին, կելտական, գերմանական, սլաւ։ Գրավիդեան կը կոչուին այն բնիկ լեզուաց շատերն որք մէկ ընտանիքի կը վերաբերին։ Այս երկու մեծ ճիւղերէն զատ կան նաեւ հարկարաւոր ստորաբաժանումներ։ Պ. Վըստ հաշիւ ըրած է 240 լեզուներ եւ 289 գաւառաբարբառներ կան ի Հնդկաստան։ Այդ լեզուներն եւ գաւառաբարբառք յետեւեւեւ զանազան այրուբէնով կը գրուին։ — Պէտք է յարեւ թէ անգլիկերէնը կառավարութեան լեզուն է, սանսկրիտը Հնդկաց գրական լեզուն եւ Պարսկերէնն իսլամաց գրական լեզուն։

Ըստ 1881 ի վիճակագրոյն, արիական լեզուները կը խօսին 217,636,000 հոգի եւ դրավիդեան լեզուներն՝ 54,352,000։ Մնացեալ ժողովուրդն կը խօսի այլ եւ այլ լեզուներ։

Այս լեզուի խնդիրներն լեզուագիտաց հետաքրքրութեան գոհացում տալու համար չեն։ Պէտք է գիտնալ թէ կրթութիւնն յոյժ տարածեալ լինելով, այդ լեզուներն իբր թարգման կը ծառայեն միլիոնաւոր մարդոց մոլորին եւ ճոխ գրականութեան մը։ Արեւելագէտի մը գրիչը պէտք է՝ բացատրելու համար անոր կարեւորութիւնը։ Մենք կ'առնունք միայն իւր ճիւղերէն մին, որովհետեւ այդ ճիւղն քաղաքային նկարագիր եւ ընկերային կարեւորութիւն ունի, — բնիկ մամուլն։

Այդ բնիկ մամուլն արդիւնք է Հնդկաստանի անգլիական կրթութեան։ Եւ Հնդկաստանի Անգլիացւոց մէջ շատեր նախանձու աչօք դիտած են անոր ծնիլն եւ զարգանալն։ Արդարեւ, այդ մամուլն չի՞ կըրնար օր մը ապստամբութեան եւ անկախութեան սերմեր ցանել եւ մտահոգութիւն պատճառել Բրիտանական կառավարութեան։ — 1883 ի վիճակագրի մը նայելով, Հնդկաստանի մէջ կան 330 բնիկ լրագիրք, որք կը հրատարակուին 110,389 օրինակ։ Պ. Պիրտվուտ, հեղինակն այդ վիճակագրին, բաղդատելով այժմեան լրագրութիւնն 1877 տարուան հետ, կը հաստատէ թէ վեց տարուան մէջ բնիկ մամուլը կրկնապատուած է։ Կը տեսնուի թէ ի՞նչ արագութեամբ կը զարգանայ այդ մամուլն։ Ազգային զգացման սերմեր կը ցանէ բնիկներուն մէջ, այլ տէրութեանց, ցեղերու եւ մանաւանդ կրօնից մէջ տարբերութիւնը կ'արգելու որ յաջողի յառաջ բերել հասարակաց եւ միօրինակ գաղափար մը։

Ը.

ԱՊԱԳԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

Հնդկաստան Անգլիացւոց տիրապետութեան կը պարտի կանոնաւոր, արդարադատ եւ բարեացակամ վարչութիւն մը, բաղդատելով մանաւանդ բնիկ իշխանաց ըմբռնած եւ անադորոյն իշխանութեան։ Ժողովրդեան թիւն աւելցած է եւ բրիտանական կառավարութիւնն մեծ ջանքեր ըրած է բարւոքելու համար ստորին դասուց վիճակն։ Բայց եթէ ստորին խաւերն զգացած չեն այդ վտիտութիւնն, ընդհակառակն բարձրագոյն դասն ամեն օր կը կրթուի Անգլիացւոց մերձակայութեամբ եւ նոյն իսկ աղատական տիրապետութեան մը յառաջդիմութեամբ։ Քաղաքակրթական այս դաստիարակութիւնն, որ բոլորովին նոր է Հնդկաստանի համար, իրաց նոր եւ փափուկ վիճակ մը յառաջ կը բերէ։

Անգլիացի բազմաթիւ մատենագիրք ու շաղթութիւն հրաւիրած են առ այս։ Ինչպէս տեսնուեցաւ, Հնդկաստանի մէջ չի կայ ոչ ցեղի, ոչ լեզուի, ոչ կրօնքի միութիւն, ոչ ալ հասարակաց շահու մը զգացումը։ Ինչ

որ հայրենասիրութիւնն կը կոչենք մեր, ան-
ծանօթ գաղափար մ'է: Ասկից է որ Անգ-
լիացիք կրցած են տիրել Հնդկաստանի, եւ
անդ անխախտ մնալ նոյն իսկ բնիկ զօրաց
միջոցաւ: Կը հասկցուի թէ իրաց այս վի-
ճակ կը փոխուի ի հիմանց եթէ յառաջ գայ
ընդհանուր գաղափար մը եւ բարոյական
կազմակերպութիւն մը: Արդ, անգլիական
կրթութիւնը կրնայ օր մը տալ Հնդկաստա-
նի միութիւնն զոր չէ ունեցած երբէք:

Այս դաստիարակութիւնն զոր Հնդկաս-
տան կ'ստանայ Անգլիայէն եւ որուն ամեն
օր կը թափանցէ ընտրեալ մաս մը — բայց
միայն ընտրեալ մաս մը —, ի հարկէ օր մը
պիտի փոխէ հպատակ կայսրութեան եւ
վեհապետ կայսրութեան միջեւ յարաբերու-
թիւնները: Անգլիացիք հասկցած են զայս: Պ.
Գոդըն նշանաւոր դրուածքի մը մէջ հե-
տեւեալ կերպիւր կը խօսի այդ նկատմամբ.
«Մեր հպատակները կը բարձրացնենք եւ
մեր հաւասարները կ'ընենք: Դիւրին է չա-
փազանցել կրթութեան քաղաքային ազդե-
ցութիւնն եւ Հնդկաստանի մէջ ունեցած
տարածութիւնն, բայց մարդիկ որ շատ
Անգլիացիներէ լաւագոյն անգլիներէն կը
խօսին, որք կը կարդան Միլ եւ Գոնդ,
Մաքս Միլլէր եւ Մէյն, որք յաջողութեամբ
կը վարեն դատական պաշտօններ, որք կը
տնտեսեն միլիոնաւոր բնակչօք բնիկ Պե-
տութեանց գործերը, որք կը վարեն բամ-
պակի գործարաններ եւ առեւտրական մեծ
ձեռնարկներ, որք անգլիներէն լեզուաւ լրա-
գրեր կը հրատարակեն եւ կը թղթակցին
Եւրոպացի գիտնոց, — այդ մարդիկ չեն
կրնար աւելի ընդերկար նկատուիլ իբր սոո-
րին ցեղ մը: Առարկել թէ ժողովրդեան մե-
ծամասնութիւնը կը մնայ իւր նախնական
վիճակին մէջ կամ յոյժ չնչին շարժում մը-
րած է, պատասխան չէ: Ազգ մը դատելու
է իւր վարիչ դասէն, մանաւանդ եթէ այդ
դասն նոյնատեւ ամբողջութիւնն մը կը կազ-
մէ մնացեալին հետ»:

Արդարեւ, բնիկները կ'ընտելանան վար-
չական մեքենային: Անցած է այն ժամա-
նակն յորում հանրային պաշտօնները կը
յանձնուէին Անգլիացւոց միայն: Բնիկներն
այսօր հաւասարապէս կ'ընդունուին քաղա-
քային ծառայութեան մրցմանց եւ հընդ-
կական վարչութեան մէջ մուտք կը գործեն:

Հնդիկներն իսկ, հակառակ դասակարգի նա-
խապաշարմանց եւ տիրակալ լինելով մաք-
րացման արարողութեանց ենթարկուիլ ի-
րենց դարձին յԵւրոպայէ, կ'երթան ուս-
նիլ յԱնգլիա եւ մրցանակներ կ'որգել մայր
հայրենեաց ուսանողաց ձեռքէն: 1885 մա-
յիս 16 ին, Հնդկաստանի տասն բնիկը Լոն-
տոնի իրաւագիտական վարժարանին ըն-
թացքը կ'աւարտէին եւ տնոնցմէ մին, Պ.
Սատիէնտրա Բրասանա Սինհա, կ'ստանար
մրցանակներէն մին:

Այս ազատականութիւնն անուղղակի
կերպիւր կը մըտնէ անգլիական տարրին գե-
րիշխանութեան: Կայուն Հնդկաստան մը
կրնար ընդ երկար մնալ նոյն վիճակին մէջ.
Յառաջդիմական Հնդկաստան մը, մեծ մա-
սամբ բնիկներէ կառավարեալ, կը թեւա-
կոխէ փոփոխութեան թուական մը որոյ
վերջն ոչ որ կրնայ գուշակել:

Հնդիկ երիտասարդութիւնն մը կը կազ-
մուի որ ազատական կրթութիւն մը կ'ստա-
նայ նոր ոգւով եւ որ իւր ներկայացուցիչ-
ներն ունի լրագրութեան, վարչութեան,
դատարանաց, կառավարական խորհրդոց
մէջ: Հնդկաստան կ'սկսի շարժիլ եւ այս
բարոյական ազատագրութիւնն յառաջ կը
բերէ ապագայ մը որ այսու կրնայ համա-
ռօտուիլ. Հնդկաստան Անգլիացւոց թէ
Հնդկաց: — Սակայն տակաւին երկար ատեն
Անգլիացիք կրնան խաղաղ ննջել, ինքեանք
իսկ կ'զգան թէ եր ող մ'է այդ, եւ գէշ
երազ մը: Անիշխանութեան, քմահաճոյքի,
բառի մատնել է այդ զՀնդկաստան: Եթէ
Եւրոպիոյ հին ընկերութիւնք իսկ այնքան
դժուարաւ կը մտնեն խորհրդարանական
կառավարութեան ճամբուն մէջ, ինչ պիտի
լինին հասարակ այդ խումբերն որք ընդ
վարժած են հնազանդութեան, այդ տար-
բեր ցեղերն, այդ թշնամի կրօններն, այդ
հակառակորդ լեզուներն: Օտար եւ ան-
կողմնակալ տիրոջ մը ներկայութիւնն է որ
կը պահէ բարեկարգութիւնն եւ խաղաղու-
թիւնն ու կ'ապահովէ յառաջդիմութիւնն:
Հնդկաստանի համար չափազանց ազատա-
կան լինելն թերեւս ծառայութեանց յոռե-
զոյնն է:

Անգլիա այսօր կը կառավարէ զՀնդկաս-
տան Հնդկաց համար, աւելի իբր խնամա-
կալ քան աշխարհակալ: Արդէն երկար ատե-

նէ ի վեր, ըմբռնած է թէ հարկ է չընդ-
կատարել յատկացնել իւր ելմտացոյցին հա-
սոյթներն եւ գործածել զայնս ի նիւթա-
կան, մտաւորական եւ բարոյական յառաջ-
գիմութիւն իւր բնակչաց : Անգլիա ոչ տուրք
եւ ոչ ուղղակի հասոյթ մը կ'ստանայ չընդ-
կատարէն : Իւր ունեցած միակ օգուտն
անուղղակի է . ասպարէզ մը իւր քաղա-
քացեաց զաւկըններուն, եւ հրապարակ մը
իւր ճարտարարուեստից եւ վաճառականու-
թեան :

Ասպագային այս գաղտնիքներուն մէջ,
մէկդի թողուցինք ուրիշ մեծ խնդիր մը,
անգլո-ռուս պատերազմ մը եւ նոր աշ-
խարհակալի մը յերեւան դալն : Անգլիական
տիրապետութեան հիմն է գորութիւնն, եւ
իւր հպատակներն, մանաւանդ իսլամը եւ
բնիկ իշխաններն, թերեւս այնքան հլու հը-
նալանդութիւն ցոյց չտային եթէ այդ զօ-
րութիւն անժխտելի չլինէր : Այլի՞նչ զգա-
ցուններ ի յայտ պիտի գան չնդկատարելի
մէջ այն օրն յորում պարտութիւն մը ջնջէ
այդ աղղեցութիւնն եւ խզէ այդ հմայքն :
Չնդիկը պիտի յարի՞ն յաղթականին . արկա-
ծախնդիր իշխաններ առթիւն օգուտ
պիտի քաղէն անկախ պետութիւններ հիմ-
նելու համար : Վեհանձնաբար պիտի շարունակեն
իրենց պարտեալ տէրանց շուրջը : Ասլա-
մայ պատմութեան մեծ դասն է որ չի հա-
պնդի (լինիլ կամ չլինիլ) է այդ : Բան մը մի-
այն հաւանական կը թուի : Երբ անգլիական
բանակն ջնջուի մեծ ճակատամարտի մը մէջ
հիւսիսային արեւմտեան սահմանագլխին
վրայ, չնդկատարելի անգլիական կայսրու-
թեան գոյութիւնն խնդրոյ տակ կ'լինայ, եւ
անիշխանութեան ու քայքայման նոր թը-
ւական մը կրնայ յաջորդել « բրիտանական
վեհապառ խաղաղութեան » :

ՔԱՂ. ԵՒ ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՆՈՐԱՎԵՊ

Ի ստորեւ կը հրատարակենք Նորավեպ մը, որ
հեղինակութիւնն է գրական ասպարեղին վրայ ար-
դէն ծանօթ հայ օրերդի մը : Յուսանք թէ ընթեր-
ցողը պիտի գնահատեն ազնիւ հեղինակուհւոյն ոսկե-
զինիկ ոճն եւ գեղեցիկ գրութեան :

ԽՐՃԻԹԻ ՄԸ ՄԷՋ

Ա .

Ասկից քանի մը տարի առաջ Թ . . .
գիւղի գեղատեսիլ ծովափին մօտ, որ ծա-
ռազարդ թերակղզւոյ մը նման կը յառա-
ջանայ Մարմարաի կապուտակ գրկին մէջ,
նսեմաստուեր նոճեաց հովանեաւ, կը գըտ-
նուէր տնակ մ'աղբալիկ՝ ցած եւ անշուք,
որոյ խոնարհ տանիքը կիսով ծածկուած էր
բարձրաբերձ կաղամախի մը թաւուտ ու-
տերուն տակ : Հեռի այն մարմարեայ փլու-
նեղէն, որը կարծես խրոխտ ճակատ մը կը
բարձրացնեն Պոսիդոնի ցամառն գէմ, հե-
ռի այն հոյակապ ծառերէն, որը կանա-
չագեղ դաշտին մէջ սփռուած են զերթ
գոյնզգոյն ծաղկունք, այն շինական բնա-
կութիւնը, սեպածեւ ժայռի մը գագաթէն,
մեհիկ մնջիկ կը լսէր մերթ մնջգին ծովուն
չառաչիւնն եւ մերթ հանդարտիկ կոհակին
աւաչը : Ոչինչ կը վրդովէր նորա խաղաղ
երեւոյթը . փոթորկին սպառնալեաց եւ
հողմին մռնչմանց դէմ կը մնար անխռով,
եւ որպէս եղեգն դիւրաւոր որ կը ծռի ա-
ռանց բնաւ արմատախիլ լինելու, հիւսի-
սային քամիին սարսմանց դէմ կը տոկար
հէք տնակը : Մահազգեաց լուծեամբ հա-
մակեալ էր միշտ նա, եւ գերեզմանի մը
ազդեցութիւնը կ'ընէր տօն օրերը սոյն
զուարճալի վայրն համախմբուող անձանց,
որք առանց շատ մօտէն դիտելու սոյն հով-
ուական խրճիթը, կ'անցնէին արհամարհոտ
ակնարկ մը միայն նետելով անոր : Ո՛ր գիտէ,
թերեւս անոնց մէջ գտնուէին զգայուն հո-
գիներ, որ փափաքէին հոն ապրիլ, առան-
ձին ընտելութեան եւ անհունութեան հետ :

Այլ էր եկողանք երբ 'արեւը' խոնարհէր

գէտի թափանցիկ կոհակն, երբ վերջապէս ուղ յետին ճառագայթներն ոսկեգոյն ներկէին զերկինս, երբ ոչ մի մարդկային արարած այլ եւս չվրդովէր սոյն գեղեցիկ վարաց վսեմութիւնն, երբ ծովը խաղաղ ցուացնէր իւր ծոցին մէջ նոճիները սայրասուր եւ երերուն լոյսը փարոսին, յայնժամ կին մը մանկամարդ, գեղեցիկ իւր դալկութեան մէջ, ոսկեհեր մանկան մը ձեռքէն բռնած, կ'ելլէր տնակէն, յաջ եւ յահեակ կը դիտէր կարծես մարդկային կերպարանի մը հանդիպելէ վախճալով, եւ տրտմալոր կ'երթար կը կրթնէր ծառի մը, եւ անտի՛ խորասուզեալ իւր մտածմանց մէջ, ժամերով անշարժ կը դիտէր կապոյտ երկինն եւ կապուտակ ծովն անսահման որ զիրար կ'ընդգրկեն ի հեռուստ:

Հերարձակ՝ սպիտակ թեթեւ զգեստ մը հագած, Նայատի մը կը նմանէր նա, եւ եթէ նոյն պահուն քերթող մը դիպուածաւ այդ դրից մէջ տեսնէր զայն, իւր երեւակայութեան մէջ միայն գոյութիւն ունեցող իտէական արարածներէն մին պիտի կարծէր: Այլ այդ կինն՝ թէեւ գեր ի վերջան զառասպելական յաւերժահարսունս, թշուառագոյնն էր մահկանացուաց:

* * *

Արմինէի ծնունդն անհուն ուրախութիւն պատճառած էր իւր ծնողաց: Պ. Մելիքեան՝ բաւական հարուստ պատուաւոր վաճառական մը՝ խաղաղ ու երջանիկ կ'սպրէր իւր կնոջ հետ, որ հրեշտակի մը պէս բարի եւ առաքինի էր: Երկուքն ալ կը գոբրգոբրային իրենց մէկ հատիկ զաւկին վրայ, եւ անոր մէկ արծաթիկ հնչուն ծիծաղը բաւ էր զիրենք մխիթարելու իրենց առօրեայ վաստակներէն:

Փոքր ինչ երես առած սիրասուն աղջիկ մ'էր Արմինէ, թխաթոյր մազերով՝ սեւ ու խոշոր աչերով: Մինչեւ տասն տարեկան հասակը մայրենի համբուրից ու գգուանաց մէջէն, իւր գեռափթիթ միտքը վայրկեան մը չէր կրցած կասկածիլ թէ կեանքն հիւսուածք մ'է թշուառութեան ու սգոյ: Այլ իւր մօր վաղահաս մահը վերջ տուաւ խեղճ աղջկան երջանկութեան: Իւր հայրն ի զուր կը ջանար ամբել նորա վիշտը՝ գգուանք ու

խնամք չռայելով անոր, մօր մը բացակայութիւնը միշտ զգալի կ'ըլլար հէք մանկան:

Անցան տարիներ՝ Արմինէ կը մեծնար իւր հօր եւ դաստիարակուհւոյն խնամք, եւ մատաղատի տունկի մը պէս, որ կը ծլի գարնան արեւուն ճառագայթից տակ, նորա բնածիր յատկութիւնը կը զարգանային ընտիր դաստիարակութեամբ:

Պ. Մելիքեան լաւ դիրք մ'ունէր ի դասս վաճառականաց, թէեւ պարզօրէն կ'սպրէր ի Բերա իւր փոքրիկ տան մէջ: Ընտիր հայր մ'էր նա, որ իրեն նուիրական պարտք համարած էր իւր աղջկան հաստատուն ապագայ մը պատրաստել:

Երբ Օր. Մելիքեան 18 տարեկան եղաւ, իւր հայրը հարկ դատեց զայն ընկերութեան մէջ մտցնել: Արդարեւ դժուարին ու վտանգաւոր է աղջիկ մը՝ առանց մօր՝ ընկերութեան մէջ տանիլ, այլ Պ. Մելիքեան լաւ կը ճանաչէր իւր դստեր բնաւորութիւնն, նորա սրտին աղնուութիւնն եւ ուղղախոհութիւնը, ուստի, վստահ իւր տուած դաստիարակութեան վրայ՝ պառաւ հօրաբեռ մ'առաջնորդութեամբ տարաւ զայն իւր յաճախած ընտանեաց տները:

Դիւթական եղաւ նորա երեւոյթն ընտանեկան ակմբոց մէջ. գեղեցիկ էր Արմինէ, այլ ոչ այն հիւժեալ եւ արուեստախառն գեղեցկութեամբ, սրով կը փայլին շատ աղջիկներ: Հաւմիայեցի արձանի մը պէս բարեկազմ էր նա, գարնան վարդի մը պէս թարմ: Վառվռուն սեւորակ աչերն ուր կը ցոլային իւր անարատ հոգւոյն մաքուր զգացումները՝ շնորհագեղ դիմացը կենդանութիւն կուտային, եւ մեծաքսաւէտ սեւ գանգոներն թոյլբէն կը հովանաւորէին իւր գեղանի ճակատն, ուր աստուածային պսակի մը պէս կը փայլէր անմեղութիւնն: Հմայիչ էր իւր ժպիտն, եւ երբ խօսէր, բաւերն անոյշ անոյշ կը հոսէին թրթրակ լեզուէն քաղցրամունջ դաշնակութեան մը պէս: Մտային կորովն ու արթուն յիշողութիւնը յոյժ ախորժելի կ'ընէին իւր խօսակցութիւնը, եւ սառնաց բացառութեան գրեթէ ամենուն համակրանքը գրաւած էր: Մէկ քանի մայրեր միայն կը բամբասէին զայն. բայց դովասանաց յորձանքին մէջ աներեւոյթ կ'ըլլային այդ բամբասանք:

Արմինէի հայրը շատ դուռն էր անոր տա-
րած յաղթանակէն, անհուն ուրախութեամբ
կընդունէր անոր նկատմամբ իրեն եղած
չնարհաւորութիւնը եւ արդէն ոսկիածոյլ
դուներ կը բանային իւր աղջկան ապա-
գայն:

Դեռահասակ կոյսը փոքր ինչ խորոյտ էր
ընտելեամբ, ու դիւրին չէր նորա հետ
ծաղրաբանել լուրջ խնդրոց վրայ: Արդարեւ
իւր հրապուրիչ գեղեցիկութիւնը շատ սրտե-
րու մէջ արծարծած էր մշտապես բոցեր,
բայց այնքան անբիծ էր իւր ճակատն, այն-
քան անարատ իւր նայուածքն, այնքան ան-
մեղ շարժումներն, որ ոչ մի յանգուգն չէր
համարձակեր զայն խաբել: ամենէն լայրւ
նայուածքներն իսկ կը խոնարհէին իւր անց-
քին առջեւ, որպէս երբեմն անվեհեր որ-
տորդներ կը խոնարհէին անտառաց մէջ
հանդիպելով երկնազեղ գիցուհիներու:

Կեանքը լուսածիծաղ կը ժպտէր Արմի-
նէի, յոյժ քաղցր էր նմա իւր ժամանակը
բաժնել որդիական սպարաւոց, ուսման եւ
ղուարճութեանց մէջ: Նորաթեւ թռչնոյ մը
պէս կ'երգէր ու կը թռչտէր անմեղունակ,
երբեմն ալ անոյշ երազներ կը գգուէին իւր
սիրտն, այլ միայն երազ էին անոնք եւ ե-
րազել ներեալ է ամեն մահկանացուի:

Սակաւաթիւ էին իրենց տունն յաճա-
խող անձինք, այլ ամենքն ալ պատուաւոր
ու բարեկիրթ: Քիչ անգամ երեկոյթներ
կուտար Պ. Մելիքեան, բայց յաճախ իւր
տունն կը ժողովէին իւր սիրելի բարեկամը
իրենց ընտանեօք: Սակայն ինք ամեն բարե-
կամներուն կը նախադասէր իւր վաճա-
ռականական ընկերոջ որդին, Երուանդն, որ
յոյժ ազնուաբարոյ երիտասարդ մ'էր: Իւր
ուսման շրջանն աւարտած էր նա տարի
մ'առաջ, եւ այժմ իւր հօր վաճառատան
մէջ կ'աշխատէր: Փոքր ինչ դժգոհ էր իւր
գործէն, քանզի լուսամիտ երիտասար-
դը կը նախադասէր փաստաբան, բժիշկ,
քաղաքագէտ եւ այլ ընկերական դասէն
պատուաւոր համարուած ասպարեզներէն
միոյն հետեւիլը քան թէ վաճառատան մէկ
անկիւնն, ահագին տեսարանի մ'առջեւ մա-
շտնել միտքն ու առողջութիւնը շնչելով
խաներու ցուրտ եւ անմաքուր օդն: Եւ իւր
հօր երկաթէ կամքը իրեն դէմ կեցած էր
միշտ:

Խեղճ տղան ընտանեկան կենաց մէջ ալ
երջանիկ չէր: Խստաբարոյ մարդ մ'էր հայ-
րը, խաւարեալ ու պահանջող, որը էր մօր-
մէ, եւ իւր մօրուն՝ չարասիրտ կին մը, ա-
մէն հնարք ի գործ կը դնէր զինքը կարելի
եղածին չափ չարչարելու համար: Ակներեւ
նախադասութեամբ կը մեծարուէին տանը
մէջ իւր միւս եղբարը, եւ կարի խոր վիշտ
մ'էր այս հէք երիտասարդին դիւրագգած
սրտին: Իւր հոգւոյն ինքնաբոլոս ցոլացում
ները կը նուաղէին իւր ցաւոց եւ միտին
խորհրդածութեանց մէջ: Խորհող էր Եր-
ուանդ, կը սիրէր մերթ թեւակոխել անընդ
աշխարհներուն մէջ, եւ դառն իրականու-
թիւնը մոռնալու համար՝ երեկոյան իւր վա-
ռարանին դիմացը, դիտելով կրակին ճար-
ճատուն բոցերը, ժամեր կ'անցնէր երազե-
լով ու խոկալով:

Պ. Մելիքեան շատ համակրելի կը գտնէր
Ղերուանդ, հակառակ անոր հօր յաւիտե-
նական տրտնջանաց իւր որդւոյն վարուց ու
բարուց վրայ: Տեղեակ էր նոցա ներքին
կենաց եւ անկեղծօրէն կը ցաւակցէր իւր
երիտասարդ բարեկամին, ու կրցածը կ'ընէր
զայն մխիթարելու համար: Թէեւ մեծ տար-
բերութիւն կար իրենց տարիքին մէջ, սա-
կայն յաճախ Երուանդ մտերմօրէն կը պար-
զէր նորա առջեւ իւր հոգւոյն թագուն
խորհրդներն ու վշտերը: Հայր եւ որդւոյ
պէս զիրար կը սիրէին. մին արու զաւկի մը
կարօտը կ'առնէր եւ միւսը բարեսիրտ հօր
մը:

Ազատ մուտք ունէր Երուանդ Արմինէի
հօր տունն. եթէ ոչ ամէն օր գէթ շաբաթն
երեք չորս անգամ հոն կ'երթար: Սոյն
դիւրակեցիկ ընտանեաց մօտ գտած սիրա-
լիր ընդունելութիւնն, նոցա առ միմեանս
տածած անոյշ գորովանքն, երկնահոս սպե-
ղանի մը պէս կ'ամոքէին իւր վշտերը:
Վայրկեան մը ինքզինքը Պ. Մելիքեանի զա-
ւակը կը կարծէր, կ'զմայլէր նորա բարե-
գութ ու առաջաւոր սրտին, զարգացեալ
մտքին վրայ, կը սիրէր խօսակցիլ անոր հետ,
եւ ժամերն յայնժամ յոյժ դիւրասահ կը
թուէին իրեն՝ երբ մանաւանդ սիրասունն
Արմինէ իւր փափկագեղ մատանց ներքեւ
հնչեցնէր տրտմահնչուն գաշնակին վրայ
Վէպէրի հմայիչ խոհերգերէն մին:

Ազնիւ երիտասարդը կը նկատէր ի նա

անոյ՛լ քոյր մը , ներողամիտ ու բարեկիրթ՝
համակիր իւր վշտաց ու զուարթութեանց :
Սիրուն առարկայ մ'էր նա իրեն համար ,
որու վրայ կը սեւեռէր իւր հոգին , ինչպէս
աչքն արորժեղի ծաղկի մը կամ ականջը
դաշնաւոր ձայնի մը : Քաղցրիկ էակ մ'էր
որ երբ ժպտէր անմեղունակ՝ կարծես խոր-
հըրդատու եւ լուսածիծաղ հրեշտակի մը
պէս իւր խոհուն մօրին վրայ կը թրթռար
ըսելով : «Մի՛ արտմիր, բարեկամ» : Յայնժամ
նա կը վանէր իրմէ հեռու ամէն վշտալից
գաղափար , եւ իւր հոգին կը սուղէր ան-
դորր ու սուրբ յոյսերու մէջ , որք զերծ երկ-
րային մոլութիւններէ՝ զերթ անոյ՛լ խոնկ
բուրուառաց յերկինս կը սլանային մաքուր
ու անարատ :

ԱՆԱՅԻՍ
(Շարունակելէ)

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Ի ՍԳԱԼԻ ՄԱՀ

ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄ Փ. ԵՍԱՅԵԱՆԻ

ԾՆԵԱԼ ԹԱԳԻՈՐ ԱՂԱ ԶԵԼԻԿ

Յասմիկ մ'էր ինկաւ . Ալեւորդ հայր ,
վարդ մ'էր եւ անբաւ Ու դժբաղդ , անկար
Ունէր հոտ , երփ , բոյր , Մի կեանքի օրեր
Շնորհս հոյլ ի հոյլ : Քեզմով կազդուրէր .

Դեռ շատ գարուններ Ազնիւ մի եղբայր՝
Ունէր վայելել , Սիրովդ խանդավառ .
Զեփեւուններ անոյ՛լ , Նաեւ տատրակիկ
Սիւք մեղմ եւ քնքուշ , Կուսադեղ դատրիկ :

Եւ հոտով բուրել Քեւ կը ցնծային՝
Այդուն զով շողեր , Աներ , ամուսին՝
Վտակն ու լծակ , Վեհիդ սիրարկու ,
Արեւն անապակ : Աչերիդ աղու :

Կռնոսի մանգաղ՝ Քու սիրուն ժպիտ
Այլ եկաւ , աւա՛ղ , Փարատէր ի սիրտ՝
Հնձեղ այս յամիկ , Դառնութիւն , վիշտ , ցաւ ,
Գեղաբոյր ծաղիկ : Մուայներ լուրթ , սեւա :

Վարդն այս հոտաւէտ՝ Եւ սիրտ իմ ճշող
Դու ես : Միշտ , յաւէտ՝ Տիրութեան բալ քո՛ւ
Քեւ՝ ազնիւ Տեկին , Քու ընտր սրտին՝
Քեւ կը հրճուէին : Բանալով մեկին՝

Կը գտնէր սիրո՛ւ
Մեղմիկ , անտրոփ :
Գանձերդ անսպառ՝
Հաճոյից շալլ :

Զէին ծառայեր ,
Այլ աղէտ , ցաւեր
Հայուն եւ մարդին
Մեղմիկ կ'երթային :

Հանրութիւն , նախանձ՝
Անկեղ եւ անյանց՝
Սերտդ պատուական
Երբէք չ'հասան :

Միշտ այն՝ սուրբ , հեղիկ , Եւ ա՛յս էր պատճառ՝
Մնաց անսուիկ՝ Ժպտուն , թեւապար
Ամէն վատ կերբի Զե՛ ազնիւ Տեկին ,
Եւ սին իղձերի : Սլացար յ'երկին :

Այս մեհեւանդներ՝ Օ՛ն , ինչո՛ւ ողբալ ,
Երկին շնորհեր թէ թողով կապալ
Էր՝ միթէ տալո՛ւ Այս ունայն եւ սին
Փութով , ցուրտ , կծու , Արտասուաց հովտին՝

Շիրմին այն նսեմ՝ Թուաւ նէ յ'երթեր՝
Եւ գլխիդ վսեմ՝ Մնալու անմեռ ,
Ընտրե՛լու անար , Սեղանին անմահ՝
Ո՛հ , հող սեւ , ստուար : Կոչնական անահ :

Ա՛հ , անագորոյն Թողով յիշատակ
Մահ չար եւ ամոյն՝ Ընդ միշտ փառունակ՝
Եթէ չ'գլծաց Մէջ մեր՝ անսասան՝
Անթիւդ շնորհաց՝ Սրտի՛ յաւիտեան :

Զմիւռնիա , 18 գեկտ .

Ճ .

ՀԱՌԱՋԱՆՔ ՊԱՆԴԵՏԻՆ

Զմրային էր տխրադեցիկ լ'արհաւրալից
մի գիշեր ,
Մութն ու խաւար սլատէր երկիր , սեւ աղ-
ջամուղջ ու ստուեր .
Զիւն ու սառոյց ծածկած կային լեռ ու ձո-
րեր ամէն կողմ ,
Իսկ հեռուէն փչէր յաճախ չոր ցրտալունջ
ուժգին հողմ :

Շանթ ու որոտ պահուած էին ամպոց
ետեւ թանձր ու սեւ ,
Երկրիս վրայ սպառնային տեղալ հեղեղ ու
անձրեւ .
Թուխ երկինքին երես երբէք աստղ մի փոք-
րիկ ոչ ցոլար ,

Կարծես բոլոր ջահը ու կանթեղը Մեծն էր
մարեր Լուսարար :

Ձորի մը մէջ վազող գետոյն փոքր ալիք-
ներ հեզօրէն ,
Մարտնչելով ժայռերու հետ՝ ձայն կուտա-
յին հեռուէն ,
Մօտակայ մեծ անտառին մէջ ծառոց սառած
մերկ ոտեր ,
Ճարճատելով բախեն զիրեար հովին առջեւ
տարուբեր :

Մի հինաւուրց կաղնիի տակ տրտում մի
անձ երեւէր ,
Ձիւնին վրայ մենիկ նստած՝ ձեռն ի ճակատ
կ'արտասուէր ,
Մի շատ յոգնած ճամբորդ էր այն , տար
աշխարհի մէջ ընկած ,
Հայ պանդուխտ մի՛ էր , նժդեհ մի սիրտ , որ
ցաւոց տակ էր ընկճած :

Նա կը դողար սաստիկ ցուրտէն , չունէր
գուլպայ , կոշիկներ ,
Յնցոտիներ ծածկած էին նիհար մարմնոյն
անդամներ ,
Կողբար կուլար հեկեկանօք , սրտի խորէն
հառաչէր ,
Հազիւ լինէր իւր տխրագին ձայն լսելի որ
կ'ըսէր .

Բ .

« Շատ տարիներ անցան դացին ես չի
մոռցայ այն սեւ օր ,
« Յորում վերջին անգամ ըսի մնաս բարեաւ
իմ հէգ հօր .
« Նա զիս գրկեց սրտին վերայ , արտաս-
ուաթոր աչքերով
« Պագաւ ճակատս , սրբեց քրտինքս իւր
դողդոջուն ձեռքերով .

« Երթաս բա՛րեաւ , սիրուն զաւակս ,
Աստուած ըլլայ քեզ ընկեր ,
« Քո փշալից ճամբուդ վրայ բռնսին
չուշան ու վարդեր ,
« Եհովային աջը ըլլայ քեզ օգնական ,
առաջնորդ ,
« Նորա աչքեր հսկեն վրադ տիւ եւ գի-
շեր , հէ՛գ ճամբորդ :

« Գնա՛ , որդեակ , Հայոց երկրէն օտար
աշխարհ պանդուխտ լեր ,

« Այլ քո կրօնին , կա՛ց քո լեզուին , քո հայ-
րենեաց անձնուէր

« Դու մի մոռնա՛ր այն սուրբ երկիր , ոյր
հողերու ներքեւ կան

« Մեր նախահարց սուրբ ոսկորներ , նոցա
անշուք գերեզման :

« Գնա՛ , զաւակս , քաջ լե՛ր , արի ,
ճգնէ՛ , ջանա՛ , աշխատէ՛ ,

« Քո բաղդ , վիճակ ու ապագայ բըր-
տանցդ մէջ որոնէ՛ ,

« Ես կը յուսամ՝ ապրիլ տեսնել վերա-
դարձիդ քեզ նորէն ,

« Իսկ թէ՛ մեռնիմ պիտի գիտեմ քեզ
ամէն ժամ երկինքէն : »

« Ըսաւ , պագաւ մէյ մ'ալ ճակատս , ար-
ցունք լեցուց մէջ ծոցիս ,

« Գնա՛ , որդեակ , գնա՛ , գոչեց . Աստուած
քեզ հետ , յիշէ՛ զիս

« Դու մ'արտասուեր , սրտիս հատոր , ա-
չացդ արցունք թող դադրին

« Եթէ կ'ուզես քո վտահար հօրդ ցաւերն
ամօքին :

« Ես մեկնեցայ աչքս ի լաց , սիրտս
տխուր է՛ալեկոծ ,

« Անհետացայ լեռներու մէջ , սարեր ան-
ցայ թաւ ու հոծ ,

« Անտես եղան իմ աչքերէս տուն , հայ-
րենիք , Հայաստան ,

« Եղեմական օրհնեալ դրախտ , էն ա-
րարչին պատուանդան :

« Հայոց սարեր , Հայոց ձորեր , Հայոց
Կաւկասն ու Մասիս ,

« Կը կրկնէին իմ հօր խօսքեր « Գնա՛ , որդ-
եակ , յիշէ՛ զիս »

« Եղեմաբուզիան Ափերահատ փրփրելով կը
գոռայր ,

« Եկեղեցւոյդ լե՛ր անձնուէր , քո հայրենիք
մի՛ մոռնայր :

« Արեւ ծածկեց ինէ՛ երեսն , ամպեր
եկան լեռներէն ,

« Երկինք գոռաց , անձրեւ տեղաց գըլ-
խիս վրայ տարօրէն ,

« Անգութ բաղլը դարձուց երեսն , ինձ
գէմ եղեւ թշնամի ,

« Ճակատագրի եղէ՛ անւոյն ես այն օրէն
խաղալի ,

Գ.

« Ինկայ այս տար աշխարհին մէջ, օտար
մարդիկ, նոր աշխարհ,
« Իմ լաց ու կոծ մտիկ չըրին երկինք իմ ողբ
ու աշխար,
« Բաղդն չի ժպտեց իմ երեսին, ես չի տե-
սայ հանգիստ օր մ',
« Մարդիկ զիս միշտ հալածեցին, ինձ դէմ
զինան անողորմ :

« Օտարութեան ցաւ ու հոգեր մա-
շեցուցին կեանքս ու զիս,
« Խոչընդոտներ ճամբուս վրայ, փուշը
ծակեցին խոր իմ սիրտս,
« Լեզի արցունք երեսներուս վրայ բա-
ցին ակօսներ,
« Բաղդի պեղած խոր փոսին մէջ կորան
բոլոր իմ յոյսեր :

« Հայրենիքէս եկաւ օր մ'ալ բօթ իմ
դժբաղդ հօր մահուան,
« Սրտիս ցաւերն բաղմապատկեց, աչերս
դարձուց լիճ արեան,
« Ախու՛վախով պատեց օրերս, գերեզմանին
մօտեցուց
« Ծաղիկ հասակս, վարդ երեսներս, կայ-
տառ իմ դէմք թողմեցուց..... :

Հէգ պանդխտին ձայնը կորաւ հեկե-
կանաց մէջ լռին,
Հառաչանքներ ու կըցկտուր ձայներ ընդ
մերթ լուսին,
Վեր կանգնեցաւ, դէպ վեր քալեց, իւր
արտասուքն սրբելով,
Նորէն ինկաւ սառին վրայ, տկար ոտ-
ներն դողալով :

Տխուր ձայն մ'ալ հոն բրդեցաւ, կար-
ծես վերջին շունչն էր այն,
Քանի մը խօսք ալ լուեցաւ, իւր հօր ուղ-
ղած փունջն էր այն :
Ա՛լ անդամներն սառած էին ցուրտին առջև
յաղթահար,
Նա դժուարաւ արտասանեց սա երկու
խօսքն վշտահար :

« Թէ չի կրցի սրբել ճակդէդ մահու
քրտինք ցուրտ ու պաղ,

« Այլ պիտի դամ դնել շիրմիդ ծաղկեայ
պսակ փոթ ընդ վաղ,
« Թէ չի կրցի դադաղիդ շուրջ փունջեր
լնու վարդերէ,
« Այլ պիտի վաղեմ թրջել տապանդ
ջերմ արտասուք, Հայր, ներէ'..... :

Դ.

Քիչ մը յետոյ գթոտ մի ձեռք զայն այն
տեղէն վեր առաւ,
Պատասպանեց ցուրտին առջև, յանշուք խը-
ղիկ իւր տարաւ,
Ժպտեց երկինք իւր երեսին, բաղդն ալ
դարձաւ բարեկամ,
Գնաց հասաւ հօր տապանին, աղաթեցաւ
մերն Արամ.....
Ճերգե Աթի
(Մ. Նահանգ)

ՄԱՍԻՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԹԻԻ	6.	(Մաս ԹԻԻ 3798)
»	7.	» » 3800)
»	8.	» » »)
»	9.	» » 3801)

ԽՆԴԻՐ

ԹԻԻ 10.

Ապացուցանել թէ նախնական թուոյ մը քառա-
կուսիէն մէկ պակեցնելով մնացորդն միշտ բաժանելի
է 12 ու :

ԾԱՆՕԹ . ԹԻԻ 6 խնդրոյ լուծման հրա-
տարակուժիւնն յետաձգուած է բաւական
թուով լուծումներ հասած չըլլալուն համար :

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵԳԻՊՏՈՍ

Կ. Պոլիս, 27 դեկտեմբեր

Աշխարհ լուրեր կը հասնին Եգիպտոսէն : Մէհտի յաջորդն եւ իւր կուսակիցը նորէն գլուխ բարձրացուցած՝ ոտքի հանած են զՍուտանցիս եւ յառաջ կը քալեն դէպ ի վերին եւ Ստորին Եգիպտոս : Սուտանցի ապստամբը՝ եթէ զուրկ են կանոնաւոր բանակի մը առաւելութիւններէն եւ մանաւանդ ռազմագէտ սպայից առաջնորդութենէն, դոնէ իրենց ստուար թուով եւ կոյր անձնութիւններէն կարող են հաւասարապէս մարտնչիլ անգլո-եգիպտական բանակին դէմ որ իրենց վրայ կը քալէ : Այդ առաւելութիւնները որք անգլիացի փախկան կազմիւրաց նման երկիւղչունին եգիպտական կիզիչ արեւէն, օգէն ու ջուրէն, որչափ կը հալածուին այնքան կարծես կը ժողվեն իրենց ոյժեր եւ երկիւղալի երեւոյթ մը կ'ստանան : Այս անգամ կը կազմեն 9-10 հազար հոգեւոր բանակ մը, յանկոյս Քօչէի . 4,000 Տէրվիլը կ'առաջնորդեն այդ բանակին զոր կ'ոգեւորեն իրենց ներկայութեամբ եւ մոլեռանդ յորդորներով : Ապա կուգան 3,000 հոգի, մէհտիական բանակէն, ընդհրաւտարութեամբ հռչակաւոր Նուր-Անկարի՝ որ Սուտանցւոյ կ'առաջնորդէր Ապու-Քէյայի մեծ ճակատամարտին մէջ, յանապատն Պայուտայի, Խարդումի անկումէն մի քանի օր առաջ : Կան նաեւ Պէտէ-վիներու հրոսախուսմբեր՝ այս կամայն Շէյխէն առաջնորդեալ : Ապստամբական այս մեծ շարժում որ յարստեւ պատերազմի մը երեւոյթն առնուլ կ'սպառնայ, լուրջ մտահոգութիւն կը պատճառէ Խտիվին կառավարութեան և Անգլիացւոյ : Անգլո-եգիպտական բանակի պատրաստ զօրաց թիւը կը հասնի առ այժմ 9,000ի, որոյ ընդհանուր հրամարտութիւնն յանձնուած է Սթիֆէնսըն զօրավարին : Շարժում մէջ առնուած եգիպտական թերթերը մանրամասնութիւններ կը պարունակեն առաջին ճա-

կատամարտի մը վրայ զոր անգլ. հրամանատարը մղեր է ընդդէմ ապստամբաց : Ըստ պաշտօնական տեղեկութեանց, Ժինէն կամ Ճինէն գիւղն՝ որ Քօչէն երեք մղոն հեռաւորութիւն ունի, Նեղոսի արեւմտեան եզերաց վրայ, առնուեր է եւ ապստամբ յետո մղուեր են : Այս ճակատամարտի մէջ անգլիացւոյ կորուստն է 39 հոգի, յորս կը գտնուի տեղակալ մը : Ուրիշ տեղակալ մ'ալ ճէյմս Բամբէյ Էլիէմ՝ վիրաւորուեր է ծանրապէս : Եգիպտացիներէն եւս վիրաւորուեր են վեց սպայք : Սուտանցւոյ կորուստները ճշդուած չեն դեռ :

Փահիրէի կեդրոնական կառավարութիւնը բնականաբար իւր բոլոր յոյսը չկընար դնել Սթիֆէնսըն զօրավարին հրամանաց ներքեւ գտնուած այժմեան բանակին վրայ եւ կը պատրաստուի նոր ոյժեր ղըրկել օգնութեան, եթէ պատերազմն եւս առաւել սաստկանայ : Գէթ այսպէս ենթադրել կուտան Անգլիոյ պատերազմական նախարարութեան ուղղեալ տեղեկագիրք, որք պատերազմական կարեւոր գործողութեանց պատրաստուելու պէտքը կ'ըզգացունեն : Սթիֆէնսըն զօրավարն իւր երկիւղն հիմնած է սա պարագային վրայ, թէ Մէհտիական բանակն օր աւուր կ'ստուարանայ Սուտանի խորերէն հասնող ապստամբներով : Հետեւաբար բուռն ճիգ մը թափելու է, Տօնկօլայէն անդին մղելու համար զանոնք, որպէս զի վերին Եգիպտոսի սահմանագլուխք զերծ մնան վտանգէ :

Այս ծանրակշիռ իրողութիւնը ի դէպ կուգան դրեթէ նոյն պահուն երբ օսմանեան բարձր Գոմիսէր Ղադի Ահմէտ Մուսթար փաշա ոտք կը կոխէ Եգիպտական հողին վրայ, ուր ամիսներէ հետէ ձեռնունայն կ'սպասէր նմա անգլիական բարձր Գոմիսէրը : Վեհ Սուլթանին եւ Թագուհւոյն ներկայացուցչաց պաշտօնն, որ բոլորովին խաղաղասիրական հանգամանք մը կը կրէր, կը դժուարանայ իրաց այս անակնկալ երեւոյթին առջեւ : Բ. Գրան եւ Անգլիոյ միջեւ վերջերս կնքեալ Պայմանագրոյն համաձայն, Մուսթար փաշա եւ Սըր Ուոլֆ Կարկ եղած միջոցներուն վրայ պիտի խորհրդակցէին զՍուտան խաղաղապէս անդորրեւելու եւ Ե-

գիպտական գործոց ընդհանուր կարգադրութիւն մը ընկելու համար, բնիկ բանակը պիտի կազմակերպէին, պատշաճ պայմանաժամ մը մը մէջ բրիտանական զօրքերն հեռացնելով անտի: Դաշնագրոյն այս տրամադրութեանց անմիջական գործադրութիւնը կարելի է սպասել խաղաղութեան օրերու մէջ. այժմ որ ապստամբական շարժումը վերսկըսած է, Փօմիսէրնեբու գործելու եղանակն եւս պիտի տարբերի ըստ հրահանգաց զօրս ստանան իրենց կառավարութենէն: Չգիտցուիր թէ Մուսթար փաշա դէպ ի սահմանագլուխ պիտի յառաջանայ, թէ առայժմ պատշաճ պիտի դատէ Գահիրէի մէջ մնալ, բանակցելով Սըր Ուոլթի եւ Խտիվին նախարարաց հետ, եւ ուսումնասիրելով իրենն ու անցքերն:

Իսկ Լոնտոնի Դահլիճէն կարելի չէ առայժմ վճռական հրահանգներ սպասել: Լորտ Սալըզբըրիի նախարարութիւնն անկայուն վիճակ մ'ունի եւ պէտք է Խորհրդարանին բացման սպասել, տեսնելու համար թէ Պահպանողականաց ձեռք պիտի մնայ թէ Ազատականաց պիտի անցնի իշխանութիւնն: Ամեն պարագայի մէջ, կը վախճուի որ Անգլիա բոլորովին համամիտ չ'գտնուի այս անգամ կանոնաւոր պատերազմ մը բանալու ի Սուտան: Անգլիացի ժողովուրդը ձանձրացած է Սուտանի վայրենեաց դէմ մղուած այս ապարդիւն պատերազմներէ, եւ նախարարութեան մը համար, ո՛րն ալ լինի այն, բաւական դժուարին գործ է նոր վարկեր ստանալ նոր պատերազմի մը համար որ գուցէ չ'լինի այնքան ժողովրդական քան որչափ եղաւ առաջինն՝ որոյ նպատակն էր ազատել Խարդու մի դիւցազնը:

Դժուարութեանց մեծագոյնը կը կայանայ մանաւանդ նիւթական այն դժուարին կացութեան մէջ յոր կը գտնուի Եգիպտոս: Անգլիա կարող է իւր գանձերը բանալ ո՛ր եւ է արչաւանք սաքսոնեան հաստատամտութեամբ յառաջ մղելու համար մինչեւ վերջը, բայց եթէ ուզէ այդ բեռը Եգիպտոսի վրայ թողուլ, խնդիրը կը տարբերի. Փարաւոններու երկիրը, վերջին տարիներու մէջ իւր կրած տառապանքներէն, ներքին կռիւներէն, արտաքին ազդեցութիւններէն մեծապէս ընկճուած, տկարացած է. կա-

ռավարութեան ելեւմուտքը խանգարուած, եկամուտներն այս կամ այն պարտուց յատկացուած, Եգիպտոս չ'ունի այժմ այն հարստութիւն եւ առատութիւն յոր յառեալ էին երբեմն աչք ամենեցուն: Իւր արտադրութիւնը, եկամուտներն, առեւտուրն, արուեստներն, ամեն ինչ եւրոպականացած, սեղմուած, ճնշուած է. եւ եթէ նոր պատերազմ մ'ալ գայ աւերել մընացեալն, ի՞նչ կը լինի Եգիպտոսի ապագայն

* * *

Ըստ վերջին լրոց, ապստամբութիւն ծագեր է ի Սուաբի մ եւ կատաղի կըռիւներ տեղի ունեցեր են փողոցներուն մէջ: Հինգ Անգլիացիք սպաննուեր են եւ Սիւէզէն օգնութիւնը կը հասնին: Կը կարծուի թէ անկարելի պիտի լինի Սուտանը խաղաղեցնել առանց օսմանեան զօրաց միջամտութեան: Մուսթար փաշա յայտարարեր է ի Գահիրէ, թէ արդի պարագայից մէջ անգլո-թրքական Պայմանագրի գործադրութիւնն անկարելի կը թուի իրեն:

Ուրեմն, կրնանք ըսել թէ, Եգիպտական խնդիրը եւ Սուտանի վիճակն՝ առանց փոփոխութիւն կամ բարեփոխութիւն կըրած լինելու, գրեթէ նոյն վիճակի մէջ կը գտնուին այսօր ինչ որ էին 1882 ին, յորմէ հետէ անգլիացիք կը պատերազմին Սուտանի դէմ: Եւ այսպէս, Եգիպտական խնդիրն, որ պահ մը մարած կը կարծուէր, արծարծուելով վերստին, օրուան հրատապ խնդրոց կարգը կ'անցնի եւ կուգայ նորանոր մտահոգութիւններ պատճառել:

Ք Ա Ղ Ո Ի Ա Ծ

ՇԱՔԱԹԱԿԱՆ ԼՐՈՑ

21—27 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Անգլիոյ Խորհրդարանը պիտի բացուի յունվար 12ին, յորում պիտի ընարուի ժողովոյն Նախագահն եւ Երեսփոխանը կանոնական երդումը պիտի ընեն Սահմանադրու-

թեան և Աստուածաշնչոյ վրայ : Թագուհւոյն ճառն ամսոյս 21ին պիտիկարգացուի :

— Կալկաթայէն առնուած հեռագրոյ մը նայելով, Տաքոյիդ ապստամբ հրոսախմբերն օր քան զօր կ'աճին ի Պիրմանիա :

— Աթէնք Օսմանեան դեսպան Ակեահ էֆէնտի մեռաւ շարթուս սկիզբն եւ յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ մեծ շքով : Աթէնքի պահապան զօրքերը զինուորական սպառնալիքով կը մատուցանէին :

Նախարարապետ Պ. Տէլիեանի և դեսպանական մարմնոյ երեք երիցագոյն անդամները կը բռնէին դադաղին չղթայները : Կառավարական և պաշտօնական մարմինը կը հետեւէին համազգեստով :

Խուռն և երկիւղած ամբոյս մը կը հետեւէր յուղարկաւորութեան մինչեւ ցկալարան :

Ակեահ էֆէնտի մարմինը զմոսուելով կ'Պոլիս բերուեցաւ :

— Հնտախտը վերստին երեւան ելած է յԱլճէզիրաս և Սպանիոյ հարաւային բանի մը կէտերու վրայ :

— Տնտեսագիտութիւնն հետզհետէ մեծ յառաջդիմութիւններ կ'ընէ ի Ռուսիա. տակաւին երկու տարի առաջ Ռուսիա բոլորովին աղքատ էր տնտեսագիտական վարժարաններու, հաստատութեանց և ընկերութեանց կողմէ : Իսկ այժմ բոլորովին հակառակն է. պետական զանձուն նախարարի առաջարկի համեմատ յառաջիկայ տարիէն գիւղատնտեսական գալորոցներ պիտի բացուին Սիպերիոյ մէջ եւս :

Բաց աստի, կ'ըսէ Ռուսիէ Կոբլէր, պետական խորհուրդն, ի քաջալերութիւն գիւղատնտեսական քանի մը ճիւղերու, 52,000 ռուբլի առանձին վարկ յատկացուցած է յառաջիկայ տարուան համար :

— Պ. Կրէվի վերընտրութիւնը լաւ տպաւորութիւն ըրած է ո՛չ միայն հանրապետական Ֆրանսայի, այլ նաեւ ամեն Մայրաքաղաքացի մէջ : Գերմանիա մանաւանդ շատ դու՛ն է. զի Պ. Կրէվի չափաւոր եւ խաղաղասէր մարդ է, եւ զիտցած է շատ լաւ վարուելի Գերմանիոյ հետ, այնպէս որ, գէթ մէկ կէտի վրայ, կ'ըսէ Նոբէլ Տոյնէ Զայդուսէ, ինչ որ բարի է Ֆրանսայի համար, բարի է նաեւ Գերմանիոյ համար :

— Պ. Կրէվի Ֆրանսայի վրայ իշխող միակ մարդն է, 60 տարիներէ հետէ, որ հասաւ իւր պաշտօնավարութեան բնական վախճանն : Իրմէ առաջ, 60 տարւոյ չափ միջոց մը, Ֆրանսայի վրայ իշխող ամեն անձինք, Թագաւոր, Նախագահ, Կայսր, անբնական եղանակաւ ինկած էին : Լուի ԺԷ, յորմէ անմիջապէս առաջ Ֆրանսան կառավարող երկու վեհապետները, Նաբոլէոն Ա. և Լուի ԺԶ. գահազուրկ մեռած էին, 1824 ին վախճանեցաւ գահուն վրայ : Բայց Լուի ԺԷ թագաւորին յաջորդող Շարլ Ժ. և Լուի Ֆիլիք և Նաբոլէոն Բ. աքսորման մէջ մեռան. Նախագահ Թիէր պարտաւորեցաւ պայմանաժամէն առաջ հրաժարիլ. նմանապէս Մարէշալ Մաք Մահոն, Ուրբին, 1824էն ի վեր, միայն Պ. Կրէվի է որուն իշխանութիւնն յանկարծական շփոթութեամբ մը վերջ չէ գտած : Ինչպէս իւր պաշտօնավարութեան 7 ամաց մէջ հրաժարիլ չպարտաւորեցաւ, երկրորդ եօթնամեկին մէջ եւս վախ չկայ որ հրաժարի : Միակ խնդիրն այն է թէ 78 տարու մարդ մը, որուն եօթնամեայ պաշտօն մը կը տրուի, պիտի կրնա՞յ ապրիլ մինչեւ 85 տարու :

— Աթէնքէն կը գրեն առ Տէպո :

« Պատերազմական պատրաստութիւնը մի և նոյն եռանդեամբ կը շարունակին, և մի քանի օրէն կը վերջանան : Հաւանական չէ սակայն որ պատերազմը (.) փետրուարի ըսկիզբէն յառաջ սկսի : Բայց հաւաստի եղէք թէ պատերազմն անխուսելի է, և տեղի պիտի ունենայ : Պատերազմն անհրաժեշտ դարձած է, և Սրբեկից մէջ իրացնող կարգի մը պատրաստուելուն ապացոյցն այն է որ այս օրերս իսկ Գերմանիա եւ Անգլիա Բ. Իրան զիմեր են՝ նորա կարծիքն իմանալու ի նպատտ Յունաստանի սահմանաց ուղղութեան մը համար : »

Ն Ե Ր Ք Ի Ն

—o—

Ըստ առաջարկութեան Ելմտական բարեօրոճման Յանձնաժողովոյ և ըստ որոշման Նախարարաց Խորհրդոյ, կայսերական հրամանաւ՝ Օսմ. Ընդհանուր Պարտուց և Րէժիի վարչութեանց ընդհանուր քննիչ անուանեցաւ Վսեմ. Թընկեր Եավէր փաշա :

—Կը յիշուի թէ Աղեքսանդր իշխանը վերջերս շատ պնդած էր որ Սերպիոյ և Պուլկարիոյ միջեւ հաշտութեան կնքման համար բանակցութիւնք Սոփիայի մէջ կատարուին : Կը ծանուցուի այժմ թէ բոլոր մեծ Տէրութիւնք, ինչպէս նաև Թուրքիա, պաշտօնապէս իրենց հաւանութիւնն յայտնած են այս մասին :

Կայս. կառավարութիւնը միանգամայն ծանուցած է Աղեքսանդր իշխանին, թէ կը հաւանի որ պուլկար պատուիրակ մը կարգուի Մաճիտ փաշայի քով, հաշտութեան պայմանաց վերաբերեալ բանակցութեանց մէջ նմա օղնելու համար : Օսմանեան պատուիրակն և պուլկար պատուիրակը մէկ ձայն պիտի ունենան, կամ թէ, այլապէս ըսելով, այս վերջինը իբր խորհրդատու միայն պիտի մասնակցի բանակցութեանց :

Բանակցութիւնք պիտի սկսին յառաջիկայ երկուշաբթիէն յետոյ :

—Առողջապահական Խորհուրդն 1886 յունուար 6 (ն. Տ.) թուով հետեւեալ շրջաբերական հեռագիրն ուղղած է առողջապահական կայարանաց .

«Հնտաստի մասնաւոր դէպքեր պատահած լինելով Սպանիոյ այլ և այլ կողմերն, որովամբ Խորհրդոյս՝ յունուար 3էն յետոյ Սպանիայէն մեկնող շոգենաւք հինգ օրուան քարանթինայի պիտի ենթարկուին օսմանեան նաւահանգիստներուն մէջ :»

—Արտաքին գործոց պաշտօնատան հեռագրական Սենեկի նախորդ տնօրէն Օտեան Խաչիկ Էֆէնտի՝ որ վերջերս Եէրկէօյի օսմ. հիւպատոսի պաշտօն կը

վարէր, վերահաստատեցաւ իւր նախորդ պաշտօնին մէջ : Իսկ հեռագրական Սենեկի տնօրէն Շէքիպ պէյ՝ իրաւագիտական խառն Դիւանի առաջին քարտուղար անուանեցաւ :

—Իւսկիւտարի կառավարիչ անուանեցաւ Բերայի նախկին կառավարիչ Պահրի փաշա :

—Կ'ըսուի թէ Օսմ. Պանքայի Տնօրէն Պ. Տըվոյի և Րէժիի Տնօրէն Պ. Օպուանոյի Վիէննա երթալուն շարժառիթն է Րէժիի վարչութեան արդի վիճակն որ բաժենտեարց կողմէ կարգեալ վարչական Խորհրդոյն արտասովոր խորհրդակցութիւն մ'ընելու պէտքը յուսած է :

Կը յիշուի թէ Րէժին իւր առաջին տարեշրջանը փակած էր երեւելի բացով մը : Այնուհետեւ ո՛չ երկրին ընդհանուր պայմանաց, ո՛չ ալ Րէժիի գործոց մէջ վիճակի բարեօրոճում մը տեղի ունեցած չլինելով, ի հարկէ վարչական Խորհուրդը խորին հոգածութեամբ կը դիտէ զայս կացութիւն, եւ կը բաղձայ առաջին առնուլ նոր բացերու :

Կ'ըսուի թէ Վիէննայի մէջ տեղի ունենալիք Խորհուրդն արմատական տնօրէնութիւններ ընելու պէտք պիտի տեսնէ :

—Կայս. կառավարութիւնը՝ նկատելով որ, ամեն տեսակ «էհէ»ներու տուկոսեաց վճարման մասին Ելմտական պաշտօնատունն, ինչպէս նաեւ ժողովուրդը, բաւական դժուարութիւններ կը կրեն, որոշեց որ յետ այսօրիկ այդ տուկոսներ 0|0 5ի իջուցուելով Օսմ. Պանքայէն վճարուին : Այդ տուկոսներ պիտի վճարուին մի քանի մաքսային տըրոց հասոյթներով որք ուղղակի Մաքսային Տրոց վարչութեան պիտի յանձնուին և այս վերջնոյն ու Օսմ. Պանքայի միջեւ հաշուութաց մը պիտի բացուի այս վճարմանց համար :

Ա. Զ. Դ. Ա. Թ. Ի. Ն.

Այս հինգշաբթի օր Պատր. Գեր. Փոխանորդ Հայրն ընկերակցութեամբ Գեր. Թաթարեան Գարեգին վարդապետի, Պատրիարքարանի գործակատարժնէկեան Աբրահամ և Ուղղունեան Մկրտիչ Էֆէնտինեան, Հռոմէական Հայոց և Յունաց Պատրիարքարաններն և Պուլկարաց Էքզարքարանն երթալով ըստ սովորութեան, Մենդեան առթիւ շնորհաւորական այցելութիւններ տուաւ :

— Ս. Էջմիածնէն արժանահաւատ աղբիւրէ կը տեղեկանանք թէ՛ Վեհ. Կաթողիկոսը մեծ փութաջանութեամբ ձեռնարկեր է Ս. Էջմիածնայ վանուց ներքին բարեկարգութեան :

Ս. Էջմիածնայ միաբանութեան այն անդամը որ Մակար Սրբազանի կաթողիկոսացման ջերմապէս աշխատած են, այժմ Նորին Վեհափառութեան կողմանէ յատուկ ուշադրութեան արժանացած չեն : Սուրբիս եպիսկոպոս, որուն համար կը կարծուէր թէ վանքին մէջ մնալով Վեհ. Կաթողիկոսին աջ բազուկը պիտի լինէր, հրաման ընդունելու է Նորին Վեհափառութենէն անմիջապէս մեկնիլ իւր պաշտօնատեղին Աթոռէրխան, և այս հրամանը գործադրուած է :

Ն. Վեհափառութիւնը բնաւ վիշտ մը չէ պատճառած այն եկեղեցականներուն՝ ոյք ճանչցուած էին ջերմ հակառակորդք իւր կաթողիկոսացման : Վեհ. Կաթողիկոսն ըստ արժանեաց կը բաշխէ պաշտօններն և ոչ թէ ո՛ր և է անձնական տեսակէտով :

Այս տեղեկութիւնները մեծապէս դուրս պիտի ընէ Ազգէն և յուսալիր ենք ապագային առելի միթարական տեղեկութիւններ ևս ստանալ :

— Դուհութեամբ կը ծանուցանենք թէ Սրբազանի առաջնորդ Գեր. Եղնիկ Եպիսկոպոս որ իւր վրայ եղած ամբաստա-

նութեանց համար ի դատ ելնելէ յետոյ անպարտ արձակուած էր, կայս. կառավարութենէն հրաման ստացած է իւր վիճակը վերադառնալու :

— Ներսէս-Վարժապետեան Ուսումնարանի ընկերութեան Մասնախումբն, Ազգ. Վարչութեան կողմէ իրեն եղած դրաւոր զեկուցման վրայ, շաբթուս մէջ գումարելով՝ հետեւեալ որոշումները տուած է .

Ս. Ներսէս-Վարժապետեան Ուսումնարանի ընկերութեան ինպատ հանգանակութենէն ցարգ գոյացեալ պատրաստ դրամն յանձնել անմիջապէս Ղալաթիոյ Կեդր. Վարժարանի Խնամակալութեան, որպէս զի այսու կարելի լինի վաղընդփոյթ բանալ Կեդր. Վարժարանն :

Բ. Հոգեւոյս Ներսէս Պատրիարքի գերեզմանին վրայ կառուցանելի շիրմին հաստատման ձեռնարկել անմիջապէս, շիրմ որ արժանի լինի Մեծանուն Հայրապետին անուան և ազգասիրութեան :

Ներսէս-Վարժապետեան Ուսումնարանի ընկերութիւնն այսպէս կատարելով իւր ստանձնած պարտականութեանց երկուքն, կը մնայ միայն Ուսումնարանի բացումն : Մասնախումբը որոշած է նոր հանգանակութեան ձեռնարկել առ այս, երբ իւր կանոնադրը վերջնապէս վաւերացուի Ազգ. Կեդր. Վարչութենէն : Յայտնի է թէ կ'առաջարկուի բարեփոխումներ ընել Կանոնագրին քանի մը կէտերուն վրայ :

Եւ ըստ սրում Ներսէս Վարժապետեան Ուսումնարանի ընկերութեան Մասնախումբի անդամք կը կազմեն նաև Ղալաթիոյ Կեդր. վարժարանի Խնամակալութիւնն, որոշուեցաւ ամեն կարելի միջոց ձեռք առնուլ վաղընդփոյթ բանալու համար վարժարանն, և քիչ ատենէն պաշտօնական յայտարարութեամբ պիտի հրաւիրուին այն ամեն հայազգի երիտասարդներ որք կը փափաքին հետեւիլ Կեդր. վարժարանի ընթացից :

ՅԱՆԿ ՆԻՒԹՈՑ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

1884 ՕԳՈՍՏՈՍ 4 — 1885 ՅՈՒՆԻՍ 27

ԱԶԳԱՅԻՆ

	Երեւ
Հանգիստ Տ. Տ. Ներսիսի Արքեպիսկոպոսի	340
Միացեալ ընկերութեանց նշանակու-	
թիւնը Գաւառաց մէջ եւ Գաւառա-	
ցւոց համար (Բ. Բ.)	385
Հայք յԱմերիկա (Տ. Հէմֆրիս Սէնթ)	388
«Արձագանք»ի դադարումը (Մարտիան)	415
Հոգեհանգիստ Ներսէս Պատրիարքի	
Ծըւըստան գիւղ վանայ	446
Հանդէս ի յիշատակ երկնաշնորհ Տ. Ներ-	
սէս Ս. Պատրիարքի	511
Ակնարկ մը վերջացող տարւոյն վրայ	
(Բ. Քէլեան)	527
Յայտարարութիւն Ներսէս - Վարժա-	
պետեան Ուսումներն ընկերութեան	564
Ամուսնական զեղծմունք յ'Աֆիօն-Գա-	
րահիսար (Ս. Գաւիէան)	582
1884 տարին ի վասպուրական (Շահէն)	599
Կաթողիկոսական ընտրելին (Արեւել)	698
Կաթողիկոսական ընտրութիւն (Շահէն)	791
Մի քանի խօսք Կաւկասիոյ Հայ վար-	
ժարանաց փական մասին (Պարսկա-	
ստան)	841
Դոնտուկով - Կորսակովի յայտարարու-	
թիւնը (Պ. Տ.)	887
Ամեն. Տ. Յարութիւն Սրբազան	919
Առաջնորդէն ճգնաժամ (Տ. Փէրբեան)	961
Հանդէս ընդունելութեան Ամեն. Ս.	
Պատրիարք Հօր ի վեհ. Սուրբանէն	992

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

	Երեւ
Ակնարկ մը վերջին աշխատութեանց վը-	
րայ (Յ. Ե.)	487, 580

Հէրաթ	876
Աֆղանիստան եւ Աֆղանցիք	987

ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

	Երեւ
Թուղն	780
Գաղղիական ախտ եւ ամուսնութիւն	
(Ռ. Ռոպէնան)	867
Յոռի սովորութիւններ (Ռ. Ռոպէնան)	1069
Ըմպելիներն ամրան մէջ (Հասկաթա)	1262

ԱՍՏԵՂԱԳԻՏԱԿԱՆ

	Երեւ
Երկրագնդիս պատմութիւնը (Ք. Ֆլա-	
մարիան)	131, 155
Խաւարմունք (Ք. Ֆլամարիան)	218
Երկնից մէջ	555

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ

	Երեւ
Ազատութեան արձանն ի Նիւ-Եորք	12
Եւրոպիոյ անտառաց վիճակը (Ռ.)	15
Առաքաւտաւոր կառք	40
Հրդեհի դէմ միջոցներ	68
Գրեթե նոր եղանակ մը	143
Փարիզէն ի Լոնտրա մէկ ժամու մէջ	869
Շարժական գմբէթներու մեծագոյրը	1017
Ազատութեան արձանն (Տ. Հէմֆրիս Սէնթ)	1165

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

	Երեւ
Օգոստոս ամիս՝ աշակերտաց ամիս (Ս.	
Եաղբէան)	55

Նէհաս, Ասիտ, Արսին թռչնոց վրայ սակաւ տեսութիւն (Ս. Եաղճեան)	199
Բանտային դրութիւնք (Յ. Յակոբեան)	259
Զի եւ ձիազոհ	862
Տէվա, Դի, Տի, Դեւ (Ս. Եաղճեան)	1007 1031
Օրագիր եւ լրագրութիւն (Մ. Ն. Նո- բէյեան) 1056 1105, 1127, 1151, 1223	

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Փեսայներ (Քասաբա-Քաթիպա)	15
Փշուր ժողովրդական երգոց	59
Երգ սոխակի	68
Կարապի երգ (Քասաբա-Քաթիպա)	122
Անկումն տերեւոց (Մելիս, — Թարգմ.	
Է. Եսայեան)	153
Մենաստան Ս. Սարիբիտոնի ի Հալլի (Ե. Զ.)	153
Փշուր Տիգրանակերտի ռամկական տա- ղերու	198
Առ սոխակն (Լաճարեան, — Թարգմ. Տ. Սեբեան)	249
Տաղ դարնան (Աւետիք Պարբերք)	273
Ոսկի ձկնիկ Պուշկինի (Քասաբա-Քաթիպա)	295
Առ աստղ (Ա. Կ. Մե-սէ, — Թարգմ. Ե. Զ.)	324
Ի մահ Տ. Տ. Ներսիսի սիրեցեալ Պատ- րիարքին Հայոց (Ե. Զ.)	364
Փշուր գաւառական երգոց (Յ. Յարո- բէյեան)	422
Զուարթնոյն ընդ մանկան (Ռեպու-Լ, — Թարգմ. Ա. Հ.)	447
Առ կոյսն ապարիներալ (Ե. Զ.)	461
Քաղաւած Ղուկիանոս երգչի Կարնեցոյ (Քաղաւթեպ)	495, 779
Օգտաւարիկներու վարումն (Վ. Հե-լո, Թարգմ. Տ. Սեբեան)	517
Տաղ ռամկաց ի վերայ Ս. Երուսա- ղէմի (Ս. Ս.)	542
Ծնունդ Բրիլի (Ե. Զ.)	566
Բանաստեղծութիւնն (Լաճարեան, — Թարգմ. Յ. Թաթարեան)	587
Առ գիւղացի եղբարս (Հոլաշեք)	611
Բռնի ամուսնացեալ աղջիկը	640
Դիներգութիւնք Նաղաշ Յովնաթանի (Յ. Յարաբէյեան)	657
Կենաց գետն (Հ. Նեշեյեան, — Թարգմ. Ա. Բաբայեան)	703
Սեւուկ (Յ. Բաբայեան, — Թարգմ. Ա. Բաբայեան)	802
Հանճարն (Ե. Զ.)	828

Երգ Մշոյ բարբառով (Մ. Սարբեան)	85 ³
Ֆինլանտացի երգ (Ա. Դարբէյեան, — Թարգմ. Ա. Բաբայեան)	875
Պիտի բաղձանք (Վարանդապետ)	914
Ի պիւլպիւլէ առ վարդն. Ի լուսնեկէ առ վարդն (Հ. Էլիսեան)	949
Երբ գիտ տանին. Տալաւորութիւնք Ե- կեղեցոյ (Վեպրիսեան Աղանաբ, — Թարգմ. Ա. Բաբայեան)	970
Տարագրեալ գիւղացիի նուէրը իւր գեղջիկուհիներին (Վարանդապետ)	1000
Խորտի տաղ Աշուգ Շիրինի (Հ. Էլիսեան)	1021
Մեցոց երգեր (Մ. Սարբեան)	1045
1882ի մեծ Գիսաւորն (Է. Շալիկ, — Թարգմ. Ս. Սեբեան Հարեյ)	1062
Աղկէկ աղջիկ Սշուգ Շիրինի (Հ. Էլիսեան)	1095
Մշուհին (Յ. Սեբեան)	1113
Դժնդա՛կ մայրս (Պեդեշեան, — Թարգմ. Ա. Բաբայեան)	1156
Վերադին ի Գաղղիա մտնելուն պա- հուն (Վ. Հե-լո, — Թարգմ. Հ. Քիլիսեան)	1189
Խնդրութիւն եւ Խորհողն (Յ. Սեբեան)	1232
Շինական ափանցն Դանուբայ (Լաճարե- ան, — Թարգմ. Յ. Գաթարեան)	1235

ԲԺՇԿԱԿԱՆ

Յոռութիւնք հնչման (Ռ. Ռոպեան)	217
Զարմանալի գործողութիւն մը (Հայր)	1035
Փոխանցումն յետ մահու (Ռ. Ռոպեան)	1249

ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ

Լուբիային տարիքը (Յ. Եսաբեան)	415
-------------------------------	-----

ԳԱՒԱՌԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՅԹ

Խուլիկ գիւղ. Ծնունդ և Մկրտութիւն (Յ. Տաթարեան)	754
Ամուսնութիւն	851
Զանազան սովորութք	926
Տարեկան »	1020
Նախապաշարումներ	1094

ԳՍԻԱՌԱՅ ՎԻՃԱԿԸ

	Երեւ
Եռզղատ (Վ. Կարան Դէն)	1091, 1116

ԳԻՏԱԿԱՆ

	Երեւ
Առանց գործիքի ելեկտրականութիւն	15
Ձեռքն եւ շարժումն (Է. Մանթոն)	752
Յուցակ զանազան արագութեանց (Հասկապ)	900
Կառավարանաւորաց գլուխը (Հասկապ)	972
Գոլերայի տարափոխիկ լինիլն հերքող փաստեր	1010
Ֆիլոքսէրա (Ն. Տաղասարեան)	1130

ԳՐԱԿԱՆ

	Երեւ
Բաֆֆի և Հայ վիպասանութիւն (Ա. Ա.)	129
	191, 215, 263
Գոռնէյի Բրդ հարկւրամեակը (Լ. Բ.)	273
Յուշը իմ (Սեփա-հէ Տէր-Սեփ)	316
Ընդունելութիւն ակադեմիական Ֆրանսուա Գորէի	507
Հաճով - Հոտով	586
Խորհրդածութիւնը հին ու նոր դրականութեան վրա. Դիցազներգութիւն ու վիպասանութիւն (Գ. Ս. Օրեան)	623
Վ. Հիւկո իւր տան մէջ (Ա. Հոսէյ)	730
«Մարտիրոսութիւն Ա. Հովսիփիմեայ» (Բաղմալեայ)	815
Միջինքի պարահանդէսներն Սալբէթ-րիէրի յիմարանոցին մէջ (Հասկապ)	848
Ինքնաբոյս ծաղիկներ (Տ. Փէր-Տեանց)	892, 953
Տր. Թաւմէճի խորհրդածութիւնը Պարթոլիի Ազատութեան Արձանին վերայ (Եանի)	985
Կին արուեստագէտներն ի Միւնիխ	1064
Մաքին իշխանուհիները. Ռուսմանիոյ Թագուհին (Ֆէյբո)	1256

ԴԱՄԲԱՆԱԿԱՆ

	Երեւ
Տիկին Նազը Վահանեան (Մ. Էրեյ. Օրմանեան)	105

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ

	Երեւ
Երկրագործի դերն, իւր վիճակն եւ դարմանները (Ն. Տաղասարեան)	1223

ՁԱՆԱԶԱՆՔ

	Երեւ
Լոնտրայի Կեդր. Նամակատունը	396
Տասներեքամեայ մարդասպան մը. — Ֆորոֆորմեալ հիւսիսային արջ մը	423
Մարդակեր ծառը	462
Երկու ժամ Մազաի բանտին մէջ (Ֆէյբո)	587, 611
Մատենադարան Անգլ. Թանգարանի	639
Օֆէնպալս, Շորէն եւ Ժորժ Բան	683
«Նիւ - Եորք Հէրալտ»	710
1885ի ձմեռն ի Սպանիա	734
Գերմանիոյ Վիլհէլմ Կայսրն	757
Գերութիւնն ի Պրէզիդէնտ	803
Ձեռքն եւ Ձայնն	853
Իննամեայ եղբայրասպան մը	927
Մահը ցաւ կը պատճառէ՞ (Հասկապ)	1046
Ի մահ ոտուով մը Պրուքլինի կամուրջէն (Հայ)	1068
40 Թիւը (Խ. Թ.)	1118

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

	Երեւ
Կնոջ դերը մարդկային ընկերութեան մէջ (Տ. Երան-Տեան) 2, 30, 79, 149, 522	
Ամուսնալուծութիւն (Բ. Քէլեան) 49, 97	
Հանրային բարոյական (Բ. Քէլեան) 359	
Հանրային բարոյականն ի գաւառս (Շահէն) 551	
Խոստովանանք առ Տէր * * * Քահանայ * * * (Ե. Տէր-Տեանց) 629	
Ամուսնական զեղծմունք ի գաւառս (Շահէն) 671	
Դրամագլուխ և աշխատութիւն (Եանի) 1132, 1154	

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՍՏՅՈՒԱԾՆԵՐ

	Երեւ
Հանելուկը ի Հայ դիւղորէս (Յ. Յոսէֆեան) 709	
Երգ Մշեցւոց բարբառով, Գալուս կիտուն, առածներ (Մ. Սարգեան) 1214	

ԼԵԶՈՒԱԲԱՆՈՒԿԱՆ

	Երեւ
Տառադարձ եւ տառաձայն (Տէրայր)	745

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ.

	Երեւ
Տիկին Ժորժ Սանտ	83
Լիվինկոթոն	224
Ալեքսանդր Տիւմա որդի (Ժեւ-Հօշ, — Թարգմ. Լ. Բ.)	390
Նկարագիր Անգլիոյ արդի նախարար- րութեան անդամոց	411, 459
Վ. Տիւրիւի, Ժ. Պէրթրան, Լ. Հալէփի	483
Ժիւլ Վէրն (Ժեւ-Հօշ, — Թարգմ. Լ. Բ.)	554
Տասթայէվսքի եւ Էր գործերն (Լ. Բ.)	634, 650
Կիյեով տը Հոմալոլտ եւ Շարլոթ Տիէտ (Օր ***)	894, 915
Վիքթոր Հիւկո (Լ. Բ.)	1038, 1083, 1107

ԿՐԹԱԿԱՆ

	Երեւ
Համազգային Ժողովն ի Լոնտոն (Բ. Ք)	25
Մանկական պարտէզները Միացեալ Նահանգներում (Ս. Պալաստեան)	459
Հիմնական տարերը դաստիարակու- թեան (Ժ. Բաւոյն, — Թարգմ. Վ. Էստեան)	601
Ուսուցչական հանձարի մի նոր ապա- ցոյց (Տ. Փերուսեան)	675
Կրթարան թէ վարժարան (Տ. Փերուսե- ան)	767, 839
Գիշերօթիկ վարժարաններն եւ դպրո- ցական կեանք ի Ֆրանսա եւ յԱնգ- լիա (Վալէր, — Թարգմ. Վ. Էստեան)	794, 816
Պարսկաստանի Հայերի դպրոցական վիճակը (Հ. Ասատեան)	959
Պարապուրդի դպրոցական դպրոցա- կանութիւնը (Հասէսեան)	989
Հատուածներ իմ յիշատակարանից (Տ. Փերուսեան)	1079
Քերականութիւնը Ա. Նախակրթարա- նում (Յ. Խօջապետեան)	1199
Պէտք է վերջապէս ջնջել աղտը (Ս. Յաջեանեան)	1247

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ

	Երեւ
Ամերիկական բարը (Յ. Կ. Հէրթշ)	40
Պըսդոնի գրատունը (* * *)	61
Այցելութիւն մը ի Կոռնց Անապատ (Շահէն)	250, 292
Էջմիածին. Մակար, Ներսէս եւ Սու- քիաս Սրբազանը (Ս. Արքեպիսկոպոս)	575
Էջմիածին. Արիստակէս Սրբազան Սեդ- րակեան (Ս. Արքեպիսկոպոս)	695
Էջմիածին. Վահրամ Եպիսկոպոս. Ման- կունի (Ս. Արքեպիսկոպոս)	719
Երեկոյեան դպրոցը ի Նիւ-Եորք (Եան- իէն)	772
Կրօնական պաշտամունք խուլ-համ- բերու համար (Եանիէն)	897
Սիպերիայէ ի Զուլիգերիա փախստեան մը պատմութիւն (Թր. Ա. Գ.)	1015, 1035
Ծաղկի եւ Պողոյ առաքելութիւն (Եան- իէն)	1110

ՆՈՐԱՎԵՊ

	Երեւ
Երազի մը գինը (Ս. Արքեպիսկոպոս)	5
Մատենի մեղքը (Բօլ Ալլան)	59, 88, 115
158, 159, 203, 226, 252, 276, 297, 348	
Թուրքերն կիւնը (Է. Ռէշպի)	369
Փոթորիկը (Թոնի Ռէշպի)	363
Սիւզան (Է. Պլէսս)	418
Կատակ մը (Ս. Արքեպիսկոպոս)	463
Հմայեալ ծածանը (Է. Վիլիէր)	489
Տանձենիին երգը (Բօլ Ֆէշ)	513
Թշուառութեան անտառը (Հ. Կ. Կը Ժանայեան)	515
Անժէլիք (Ս. Տէմա որդի)	538
Նաբոլէոն Առաջնոյ մէկ վրիժառու- թիւնը (Շ. Կիլիէն)	559
Բաքալին (Է. Մալլ)	585, 606
Սեխի մը պատմութիւնը (Շ. Բօլ Կը Բօ)	677
Երէկոյեան պատմութիւն մը (Բ. Սէլբա)	704
Մեծ հարսանիք մը (Լ. Հէշէ, — Թարգ. Թ. Թիւրքեան)	724, 745
Ի գարնան (Կիւյ Կը Մաթասեան)	775
Լուսանկարիչն (Ս. Տարե)	803
Մայրը (Կ. Կը Մաթասեան)	875
Ռուսական կեանքէ տուամ մը (Թարգմ. Պ. Տ.)	921, 944
Կինն ըստ Աստուծոյ (Բ. Տէրպէ)	995

Այլեանց վարդը (Ֆ. Օթէպան)	1041
Մեռեալը (Օ. Ժորժէ)	1114
Գլանիկը	1137
Կրտսեր Գոյրը (Ժ. Պէր Գը Թէրէ)	1160, 1181
Որո՞ւ ժառանգութիւնը (Ք. Մարժէ, Թարգմ. Լ. Եսայիէան)	1211, 1254
Կառափնաբեմին վրայ ամուսնութիւն (Ա. Տէմա, Թարգմ. Ս. Դանիէան)	1259

ՉԱՓԱԳԻՏԱԿԱՆ

Բաղդի խաղեր (Յ. Եսայիէան)	110
Հարսին աթոռը	760
Թուաբանական խաղ մը	966

ՊԱՏՄԱԿԱՆ

Վիլլիէի գերեզմանատունը (Ֆէլպրե Թարգմ. Լ. Ասատուր)	821
Սլաւեան ցեղի լուսաւորիչները	911
Կրօնը նախկին Եգիպտացւոց վասն ապառնի կենաց (Գ. Զ.) (* * *)	949
Քանի մը խօսք Նէվրուզի նշանակութեան մասին	974
Հիմնադրութիւն Ֆրանս. Ակադեմիոյ (Ս. Դ.)	1088
Ազգային նշխարներ (Գ. Վ. Սքոտլէնդ)	1156, 1178, 1207

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՅ

Թուանշանը (Ս. Տ.)	86
Աղէքսանդրիոյ վարժարանը (Յ. Եսայիէան)	588
Գրաբանութիւն և ձեռագիրք (Հասկաթա)	769

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ

Օրագիր և լրագրութիւն (Մ. Ն. Նուրիէան)	54
Յունաց Պատրիարքարանի ներքին կազմակերպութիւնը (Դ. Զուլաթեան)	155

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Եփրատայ տեղւան (Մ. Նախնէան)	416
Լճաւան (Հրանդ Ասատուր)	434
Ճանապարհորդական նկատողութիւնը (Մ. Նախնէան)	557, 756, 1070
Արաբկիր քաղաքը (Մ. Նախնէան)	655
Ակն (Մ. Նախնէան)	870, 917
Այցեակն աւուրցա ի Հայսն Աղբակու (Յ. Վ. Սուլիէան)	939
Տիգրանակերտ կամ Ամիդ (Մ. Նախնէան)	967
Տրապիզոն (Յ. Տաստիէան)	1140
Տեհ ի Պոնտան (Մ. Նախնէան)	1237

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ

Գործակցութիւն և գործակից ընկերութիւնը (Բ. Ք.)	75
Քանի մը խորհրդածութիւններ վերջին սնանկութեանց առթիւ (Բ. Ք.)	431
Քանի մը խորհրդածութիւններ Հայոց հողային դրութեան վրայ (Բ. Ք.)	455
Կարնոյ տնտեսական վիճակը	647
Ֆրանսայի դադթային աշխարհավարութիւնը	701
Առողջապահութիւնը որպէս գործիք ազգութեանց զարգացման	799, 824
Ամերիկայի նիւթական վիճակը (Մ. Թոփանէան)	845
Գործաւորաց վիճակն յ'Եւրոպա (Տ. Աւանտեան)	985
Աշխատութեան խնդիրը (Եսայիէան)	1175, 1202

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Զինացիք նկարագրեալ յինքեանց (Զեյի - Քի - Թանի, Թրգ. Կ. Ս. Իսիէան)	120
	134, 195, 269, 365
Ընտանեկան և ամուսնական կազմակերպութիւնն յ'Աստրալիա	658, 682

ՔՐԱԳՐԱԿԱՆ

Կորտոն զօրաւար	145
Քաղաքական կուսակցութիւններն յ'Եւրոպայ	

	Երեւ
րոպա եւ յՍմերիկա (Բ. Ք.)	265, 287
	311, 335
Տեսութիւն մը մեծ տէրութեանց ձըկ- տուններուն վրայ (Բ. Ք.)	407, 479
Ռուսիոյ վիճակը	503
Ռուս աշխարհավարութիւնն ի կեդ- րոնական Ասիա	942
Պարսկաստան եւ իւր զինուորական կազմութիւնը	964
Ռուսը եւ Անգլիացիք ի կեդրոնական Ասիա (Ա. Նիւշեւ)	1228, 1251

ԲԱՂՈՒԱԾ ՇԱՐԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ	Երեւ
Արաքին, Ներքին, Ազգային, 16, 43, 63	
90, 122, 143, 162, 206, 230, 254, 273	
500, 525, 552, 576, 597, 424, 447, 475	
494, 519, 543, 567, 591, 616, 641	
661, 687, 711, 736, 758, 781, 806	
829, 854, 878, 904, 928, 950, 975	
1000, 1022, 1047, 1072, 1095, 1120	
1143, 1168, 1192, 1215, 1240, 1264:	

ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ

(Առանձին տպագրութեամբ ամեն թեր-
թերու հետ տրուած տետր առ տետր):